Ազգ

AZG
armenian newspaper

Յուլիս 18
1992
Շաբաթ

երկօրեայ թերթ
Բ տարի, թիւ 60 (152)
գինը 95 կ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPIRI SU

Հանրապետական գրադարան
Գոս. Բանգրատեկա
ՀԱՍՀ-Արա.ՍՍՀ
Ս. Ալ. Մաշտոցի անվան
Ս. ԱՐՔԱՆԳԵԼՍԿԻ անվան

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ՍԿՍԵԼ ԵՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՄԱՐՏԱԿԵՐՏ

Ղարաբաղի նորութիւններ գործակալութեան տվյալներով, Մարտակերտի շրջանի ազատագրված գյուղեր են վերադառնում տեղահանված բնակիչները:

Շարունակվում է հայկական բնակավայրերի հրթիռա-հրետակոծումը: Մարտունու շրջանի Կարմիր Շուկա ավանում զոհվել է մի կին, երեք բնակիչ վիրավորվել են: Մաճկալաշեն գյուղում լիովին ավերվել է երեք տուն:

Հայկական ինքնապաշտպանության ուժերը շարունակում են առաջխաղացումը Մարտակերտի շրջանում. մարտեր են ընթանում Հաթերք, Ումուդլու, Մաղավուզ գյուղերի մոտ:

Ուժեղ հրթիռա-հրետակոծման են ենթարկվել նաեւ Վարդենիսի, Տաուշի եւ Մեղրու շրջանների սահմանամերձ բնակավայրերը: ■

ՌԱԿ Կենտրոնական վարչութեան յայտարարութիւնը

ՌԱԿ Կենտրոնական եւ ՀՈԱԿ Հանրապետական վարչությունները վերջին շրջանում Հայաստանում եւ ԼՂՀ-ում ստեղծված իրավիճակը համատեղ եւ համակողմանի քննելուց հետո որոշեցին սփյուռքում եւ Հայաստանում հանդես գալ հետեւյալ հայտարարություններով:

Հայ ժողովուրդի զաւակները, մայր հողի վրայ, Արցախի մէջ թէ ամբողջ աշխարհի տարածքին, խոր անձկութեամբ կը հետեւին հայրենական հաղթական կեանքի զարգացումներուն, Արցախի ազատագրական պայքարի ընթացքներուն, հայրենիքի ֆիզիկական գոյութեան սպառնացող վտանգներուն ու զայն նոր կոտորակումներու առաջնորդող ՀՀՇ-ՀՅԴ մրցակցութիւններու:

Հայաստանի Հանրապետութիւնը, արտաքին բազմաբնոյթ սադրանքներու կողքին, հարկադրուած է դիմագրաւել տնտեսական ահաւոր տագնապ մը, հետեւանք խորհրդային Միութեան փլուզման, ատոմէջնանական շրջափակումի, ներքին անարդարանալի կարգադրութիւններու եւ շահադէտ գործունէութեան:

Մենք կը հաւատանք, թէ անքառնալի չեն խոչընդոտները եւ անլուծելի չեն հարցերը: Դարերու դաժան փորձութիւններուն տոկացած մեր ժողովուրդը ի վիճակի է յաղթահարելու զանոնք՝ լարելով իր ամբողջ կարողականութիւնը եւ իր ծրագրեալ յեսագայ բոլոր քայլերը համակարգելով հայրենի պետականութեան հետ:

Հետեւաբար՝

ա) Զօրակցութիւն կը յայտնենք հայրենի պետականութեան եւ ազգային կը նկատենք մեր նոր պետականութեան հիմերը խախտող ամէն քայլ:

բ) Քաղաքական ներկայ պայմաններու լոյսին տակ կը գտնենք, թէ Հայաստանի խորհրդարանն ու հանրապետութեան նախագահութիւնը տարալեալու, ինչպէս նաեւ երկիրը աղակայունացնելու բոլոր փորձերը կրնան անմիջապէս հարցականի տակ դնել Հայաստանի եւ Արցախի գոյութիւնն իսկ:

գ) Կը պահանջենք իշխանութեան մարմինները դուրս բերել արտաքինաքաղաքական-կուսակցական ենթակայութենէ:

դ) Ճգնաժամային այս պահուն կ'առաջարկենք կազմել ազգային համաձայնական դահլիճ մը, մասնակցութեամբ խորհրդարանէն ներս գործող քաղաքական այն հոսանքներուն, որոնք պատրաստ են իրենց քաղաքական ու տնտեսական պլատֆորմներէն առժամանակ զիջումներ կատարելով, համաձայնի Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի՝ երկիրը տնտեսապէս ու քաղաքականապէս կայունացնելու ձգտող ծրագիրներուն, միասնաբար դիմագրաւելու համար օրուան հրամայականները:

Կը հաւատանք, թէ այս ձեւով Հայաստանի կառավարութիւնը կը դառնայ իշխանութեան գլխաւոր լծակը՝ ձերբազատուելով քաղաքական մէկ խմբաւորումի ամլացնող ենթակայութենէն ու երաշխաւորելով առողջ ռամկավարութեան մը կիրարկումը:

ՌԱԿ-ը լուծման այս տարբերակը կը ներկայացնէ, համոզուած թէ Հայաստանի այսօրուան եւ մօտիկ վաղուան տագնապներն ու խնդիրները

ա) կարելի չէ լուծել ներքին լարուած կացութեան մը մէջ,

բ) կարելի չէ լուծել քաղաքական միակ ուժի մը յենելով,

գ) կարելի չէ լուծել ադադամկավարական միջոցառումներով:

Հետեւաբար, ՌԱԿ-ը կոչ կ'ընէ Հայաստանի ռամկավարական բոլոր ուժերուն, քաղաքական կուսակցութիւններուն, խորհրդարանական խմբակցութիւններուն՝

ա) հրաժարիլ ազգը պառակտող քայլերէ,

բ) բոլոր ուժերը կենտրոնացնել ազգային, տնտեսական, քաղաքական ու ընկերային անլոյծ հարցերուն վրայ,

գ) արագօրէն ստեղծել պատշաճական կուռ համակարգ եւ կառոյց՝ վերահսկելու համար Արցախի բռնագրաւեալ տարածքներուն, պատշաճելու արցախահայութեան կեանքը եւ իրաւունքները,

դ) մշակել եւ հետաքրքրել կարելի, տրամաբանական ծրագիրներ՝ յոյլատրելով անոնց շահարկումը կուսակցականերէն: Այդ ծրագիրներու ստիպողական իրագործումը համահայկական ճիգերով մեր երկիրը պիտի կարենայ առաջնորդել դէպի տնտեսական կայունութիւն, ինքնաբաւութիւն ու քաղաքական հզօրացում:

Մենք իրաւունք չունինք գերագոյն ճիգ մը չընելու, երբ վտանգուած են մեր երկիրն ու անոր անկախ պետականութիւնը: ■

Հայաստանն ու Վրաստանը ոչ մի տարածայնություն չունեն

Երեկ Երեւանում հայտարարեց Վրաստանի արտգործնախարար Ալեքսանդր Չիքվաիձեն

Վրաստանի արտգործնախարարի այցին իհարկե այդքան էլ մեծ նշանակություն չէր տրվի, եթե այն լիներ մի քանի տարի առաջ: Սակայն վերջին շրջանում հայ-վրացական հարաբերություններում նկատվող համեմատական աշխուժությունը գալիս է հաստատելու այն ճշմարտությունը, որ երկու հարեւան երկրները, ինչքան էլ դարավոր բարեկամություն ունենան, չեն կարող այն չվավերացնել դիվանագիտական փաստաթղթերով: Այդ առաքելությամբ էլ երեկ Երեւան ժամանեց Վրաստանի արտգործնախարար Ալեքսանդր Չիքվաիձեն: Օդակայանում մամուլի համար արած հայտարարության մեջ նա նշեց, որ հաճելի առաքելություն է կատարում եւ հույս ունի, թե Հայաստանի ղեկավարության հետ իր հանդիպումները արդյունավետ կլինեն: ➡ էջ 8

Չեխո-Սլովակիան բաժանվում է

Վացլավ Հավելը հրաժարական է տալիս

Սլովակիայի խորհրդարանը երեկ առավոտյան ձայների ճնշող մեծամասնությամբ քվեարկեց այն նախագծի օգտին, որը սուվերեն պետություն է հռչակում Չեխիայի հետ դաշնակցային պետություն հանդիսացող այդ հանրապետությունը: Գիշերը հեռուստատեսային իր ելույթում դաշնակցային Չեխո-Սլովակիայի նախագահ Վացլավ Հավելը հայտարարեց, թե առաջիկա երկուշաբթի օրն իր հրաժարականն է ներկայացնելու դաշնակցային խորհրդարանին, լուսաբանություններ տալով իր այդ քայլի մասին: Սլովակիայի խորհրդարանը որոշեց նաեւ, որ հանրապետությունը առժամանակ կառաջնորդվի դաշնակցային սահմանադրությամբ, մինչեւ որ պատրաստ լինի իր սեփական, նոր սահմանադրությունը: Այսպիսով, Կենտրոնական եւրոպայում կառաջանան երկու նոր պետություններ: ■

Կատաղի կռիվներ Գորադժեն գրավելու համար

Սերբական ուժերը երեկ ուժեղացրին հարձակումը Գորադժե քաղաքի վրա, մինչ Բոսնիայի իսլամները շարունակում էին կատաղորեն պաշտպանել իրենց ձեռքում մնացած այդ վերջին քաղաքը: Այսուս կողմից, Լոնդոնում երեկ շարունակվեցին Լորդ Քերինգտոնի գլխավորությամբ սերբ, խորվաթ եւ բոսնիացի ղեկավարների բանակցությունները, առանց շոշափելի արդյունքների: Լորդ Քերինգտոնը սերբերին մեղադրեց նախահարձակ քաղաքականություն վարելու համար: Անգլիացի մի այլ պաշտոնատար Դուգլաս Հերդը երեկ եղավ Սարաեւոյում, որտեղ հայտարարեց, թե համաշխարհային ընտանիքը չի թույլատրելու Բոսնիա-Հերցեգովինայի տարանջատումը: Այդ պատճառով քաղաքի փողոցներից մեկում պայթեց ականված մի ինքնաշարժ: ■

Ռոս Պերոն դուրս եկավ մրցավազքից

Պաշտոնապես չառաջադրված նախագահական թեկնածու Ռոս Պերոն հինգշաբթի գիշեր մամուլի ասուլիսի ընթացքում հայտարարեց, թե որոշել է լքել ընտրարշավը, նկատի ունենալով Դեմոկրատական կուսակցության վերաբերմունքը, որը նվազեցրել է իր ընտրական հնարավորությունները: Պերոյի այդ որոշումը դժգոհությամբ եւ նույնիսկ զայրույթով դիմավորվեց նրա հետեւորդների կողմից, որոնց ձայները գրավելու մրցումն իսկույն սկսվեց Հանրապետական եւ Դեմոկրատական կուսակցությունների կողմից: ■

Բարուն հույս ունի Մ. Նահանգների անաչառության վրա

Սնուրֆ, 16 հուլիսի.– Ինչպես հայտնեցին Ադրբեջանի Գերագույն խորհրդի միջազգային կապերի բաժնից, խորհրդարանի նախագահ Իսա Գամբարովը նամակ է հղել ԱՄՆ-ի կոնգրեսին, Ադրբեջանին մարդասիրական օգնություն չցուցաբերելու վերջինիս որոշման կապակցությամբ: Նամակում մտահոգություն է հայտնվում այդ առթիվ եւ նշվում, թե Ադրբեջանը տարածքային պահանջներ չունի հարեւան երկրներից: Նամակում մատնացույց է արվում Հայաստանից զենքի մատակարարումները Լեռնային Ղարաբաղ եւ հույս հայտնվում, թե կոնգրեսն ապագայում ավելի անկողմնակալ որոշումներ կընդունի: ■

ՀՈԱԿ Հանրապետական վարչութեան յայտարարութիւնը

Ադրբեջանի Հանրապետութեան ցեղասպանական գործողութիւնները Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան բնակչութեան դէմ յանգել են ողբերգական հետեւանքների: Նախայարձակ Ադրբեջանը, միջազգային որոշ ուժերի մեղսակցութեամբ, գրաւել է ինքնորհուած ԼՂՀ-ի տարածքի մի մասը:

Մարտունակ բանակի բացակայութեան, պաշտպանական կառուցուածքների գործողութիւնների անյստակութեան, այդ կառուցուածքներում ապաշնորհ անձանց նշանակման, ինչպէս նաեւ ինքնապաշտպանութեան ուժերի ներսում կուսակցականութեան դրսեւորման պատճառով ջլատուել է դիմադրութիւնը: Ստեղծուած իրավիճակը աւելի է լրջացել ԼՂՀ-ի եւ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների միջեւ հակասութիւնների եւ այս վերջինների կողմից Արցախի հիմնահարցի միջազգայնացման գործում թոյլ տուած սխալների եւ շեղումների հետեւանքով:

Արցախում մեր կրած պարտութիւնները, սոցիալ-տնտեսական, արտաքին եւ ներքին քաղաքականութեան ասպարէզներում առարկայական թէ ենթակայական պատճառներով ծախողումները Հայաստանում ստեղծել են քաղաքական լարուածութիւն, որն սպառնում է հանրապետութեան կայունութեանն ու ժողովրդավարութեան ամրապնդմանը:

Արցախահայութեան իրաւունքների պաշտպանութեան, իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ երկխօսութեան կայացման եւ նորաստեղծ մեր պետականութեան պահպանման մտահոգութեամբ ՀՈԱԿ-ը արձանագրում է.

1. Անհապաղակայարմար համարել ՀՀ նախագահի հրաժարականի պահանջները ու խորհրդարանի կազմալուծումը, որը սպառնում է հանրապետութիւնում ստեղծել սահմանադրական վակուում, անիշխանութիւն եւ քաոս:

2. Արագացնել սահմանադրութեան ընդունումը:

3. Օրէնսդիր իշխանութեան իրաւունքները ու պարտականութիւնները յստակեցնելու նպատակով անցկացնել ՀՀ ԳԽ-ի ռեֆորմ:

4. Ընդունել օրէնք կառավարութեան, բանակի եւ Ազգային անվտանգութեան խորհրդի մասին:

5. Անընդունելի համարել իշխանութեան մարմիններում իրենց անկարողութիւնն ապացուցած եւ իշխող խմբաւորման վերնախաւի նեղ շահերը հետապնդող ու պաշտպանող անձանց ներկայութիւնը տուեալ պաշտօններում:

6. Զանգուածային տեղեկատուութեան պետական միջոցները դուրս բերել միակողմանի, միակուսակցական խօսափողի վիճակից, դարձնել դարձնել վերկուսակցական, ազգի ու պետութեան միասնականութեանը ծառայող, բազմակարծութիւնն ապահովող, հանրապետութիւնում տիրող տեղեկատուական քաղցը բաւարարող միջոցի:

7. ՀՀ նախագահին առաջարկել «իրեն կից ստեղծել բազմակուսակցական խորհրդակցական մարմին, որի պարտականութիւնը կը լինի համազգային նշանակութեան հարցերում օգնել ՀՀ նախագահին: ■

Հայաստանի նախագահը Վանաձորում

«Դուք ձեզ ավելի դաշնակցական մի համարեք, քան ինձ», ասում է Լեւոն Տեր-Պետրոսյանը

Վանաձոր, 17 հուլիս, մեր թղթակից ՄՈՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ.– Երեկ Վանաձոր էր ժամանել Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նրան ուղեկցում էին աղետի գոտու եւ բռնագաղթվածների հանձնաժողովի նախագահ Խաչիկ Ստամբոլցյանը, Հայաստանի ԳԽ փոխնախագահ Արա Սահակյանը, ԳԽ պատգամավոր Խոսրով Հարությունյանը, նախագահի խորհրդականներ Վահան Փափազյանն ու Ստեփան Ղարագեբակյանը:

Լ. Տեր-Պետրոսյանը այցելեց քաղխորհրդի գործկոմ, այնուհետեւ «Ռուբին», Ճգզրիս հաստոցների գործարաններ, ծանոթացավ կոլեկտիվներին, նրանց հոգսերին ու հիմնահարցերին, զրուցեց մասնագետների հետ: Այդ ընթացքում նա պնդեց զրույց ունեցավ նաեւ բոլոր այն վանաձորցիների հետ, որոնք ամուսնացել էին դիմավորելու նախագահին: Օրվա երկրորդ կեսին Հովհաննես Աբելյանի անվան թատրոնի դահլիճում կայացած հանդիպման ընթացքում վանաձորցիների կողմից բարի գալուստի խոսքեր ասաց քաղխորհրդի նախագահ Հովհաննես Մաշինյանը:

Այնուհետեւ նախագահը ներկայացրեց իր տեսակետները, որոնցից ամենանշանակալիները վերաբերում էր Արցախին: Նա առաջնային համարեց ազերիների կողմից գավթված հողերի նշգրավումը, Արցախի բնակչության անվտանգության ապահովումը, որից հետո միայն, ըստ նրա, կարող է խոսք լինել Արցախի կարգավիճակի մասին: Ազգային դաշինքի պայքարը խորհրդարանում Արցախը պաշտպանել ճանաչելու վերաբերյալ նա համարեց քաղաքականապես ոչ ճիշտ մոտեցում: Խոսք գնաց նաեւ հուլիսի 21-ից հետո Իրանը Հայաստանին կարող կամրջի շինարարության ավարտի մասին, եկող տարի 3 միլիոն խորհրդային մետր հզորությամբ Իրան-Հայաստան գազամուղի, Վրաստանի հետ տնտեսական եւ քաղաքական հարաբերությունների սերտացման եւ այլ հարցերի շուրջ: Իսկ ընդդիմությանը որեւէ կերպ պատասխանած լինելու համար նա ասաց, թե որքան էլ հակասահմանադրական լինեն իշխանությունների դեմ ձեռնարկվող գործողությունները, ինքը նրանց դեմ պայքարի անօրինական ճանապարհ չի ընտրի:

Լեվ-լեցուն դահլիճը ալիկվեց դժգոհությունից, երբ նախագահը փորձեց գովաբանել Խաչիկ Ստամբոլցյանին, ասելով, թե նա բաց դռներ է ծեծում աղետի գոտու վիճակը բարելավելու համար: Հունիսի 29-ի հեռուստաելույթի առթիվ նա ասաց, թե դա բխում էր ժողովրդի շահերից, եւ վտանգ կար, որ քաղաքական հեղաշրջում կլինի: ՀՅԴ Վանաձորի կազմակերպության այն մտքին, թե իրենք բազմաթիվ հարցերում համամիտ չեն Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, նա ասաց. *«Դուք ձեզ ավելի* ➡ էջ 8

digitised by A.R.A.R.@

Վառած հողի քաղաքականությունը եւ Արցախը

Պատերազմի օրենքներն անմարդկային են: Բնքը պատերազմն ադեն անմարդկային է, ուստի կամա թե ակամա սխալված ես լինում ավելի խաղաղ ժամանակներին բողնել մարդասիրությունը, տարբեր տիպի ազատություններն ու նման «փափուկ» հասկացություններ:

Արցախի վերջին մեկ ամսվա իրադարձությունները ցույց տվեցին, որ Ադրբեջանը հետեւողականորեն «վառած հողի քաղաքականություն» է իրագործում Շահումյանի ու Մարտակերտի նվաճված տարածքներում հրկիզելով ու ավերելով հնարավոր ամեն ինչ: Նպատակը մեկն է՝ հասնել այն բանին, որ պատերազմական գործողություններն ընթանան փաստորեն չբնակեցված տարածքներում: Այդ դեպքում ադեն ավելի հեշտ կլինի միջազգային ասյաններում Հայաստանին ագրեսոր հռչակելը, որովհետեւ մեջտեղից կվերանա ազգերի ազատ ինքնորոշման չարչրկված սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը:

«Վառած հողի քաղաքականության» առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այս դեպքում էականը տարածքներ նվաճելն ու այդ տարածքներում բնակության համար անհանելի պայմաններ ստեղծելն է: Դրանից հետո ադեն էական չէ, թե ում ձեռքը կանցնեն այդ տարածքները, եւ պատերազմական գործողություններն էլ այդ տարածքներում երկրորդական նշանակություն են ստանում: Կոնկրետ Արցախի դեպքում Ադրբեջանի դեմ համենման քաղաքականություն վարելը Արցախի համար անհամեմատ պակաս արդյունավետություն կունենա: Ի վերջո Ադրբեջանը կարող է մեկ-երկու տարվա ընթացքում վերականգնել իր բոլոր ավերված բնակավայրերը, իսկ ծայրաստիճան քայքայված տնտեսությամբ Արցախի համար մեկ հրկիզված գյուղի վերականգնումն անգամ մեծ ջանքեր կպահանջի:

Ցանկացած պատերազմ խաղաղության ժամանակ նախապատրաստվում է հնարավոր պատերազմին եւ պատերազմի ժամանակ ապավելիք խաղաղությանը: Իհարկե, այսօր Արցախում խաղաղության մասին խոսելը վաղ է: Պատերազմը գնալով ավելի ու ավելի լայնածավալ բնույթ է ստանում ապառնալով շրջանը վերածել շարունակական պատերազմի արյունոտ գոտու: Բայց պետության պաշտպանական խնդիրների իրագործմանը զուգահեռ պետք է միջոցներ ձեռնարկել նաեւ հնարավոր խաղաղության դեպքում նորմալ կենսագործունեության ուղղությամբ: ԼՂՀ իշխանությունների՝ թերեւս նույնիսկ փոքր-ինչ ուշացած այն որոշումը, որ որի խիստ սահմանափակվում է հանրապետությունից բնակչության արտահոսքը, վկայում է, որ այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում: Ակնհայտ է, որ միայն խաղաղ բնակչության ներկայությունը կարող է հետագայում միջազգային ճանաչման հույս ներշնչել:

Վերջին հաշվով ԼՂՀ-ն այսօր լայնածավալ պատերազմի մեջ է եւ փորձում է այս կամ այն կերպ պահպանել իր տարածքային ամբողջությունը: Ուժերի ներկա հարաբերակցության պայմաններում դա թերեւս սենսացիա չէ: Պարզապես ակնհայտ է, որ Արցախում ռազմական հաջողությունների նշարի հասնելուց հետո ելքերն Արցախի համար կործանարար են, եւ, որ նույնպես կարեւոր է, ցավալիորեն հետու են անմիջապես պատերազմող ուժերի կողմից կառավարվելուց:

Միջազգային ասյաններում շարունակ բարկահարվող սահմանների անձեռնմխելիության սկզբունքը, չգիտես ինչու, տարածվում է միայն Ադրբեջանի սահմանների վրա: Եւ շարունակ մոռացվում է, որ այդ սկզբունքը հավասարապես կիրառելի է նաեւ ԼՂՀ սահմանների առնչությամբ: Ո՞վ, եթե ոչ միջազգային իրավունքի սուբյեկտ դառնալուց Հայաստանը, պետք է իշեցնի սա:

Ա. Բ.

Արարատյան դաշտի մայրամուտը

Բնապահպանական շարժումը, որը Հայաստանում 80-ական թվականների վերջերին այնքան մեծ թափ էր ստացել, հայտնի իրադարձությունների պատճառով երկրորդ ոլյան մղվեց: Մինչդեռ ամբողջ աշխարհում դրանց վրա վիթխարի ուշադրություն է դարձվում: Եթե հաշվի առնենք նաեւ այն, որ աշխարհի շատ երկրներում բնապահպանական միջոցառումները հաճախ մեր չափանիշներով «շքեղություններ» են, իսկ մեզ մոտ պարելու նվազագույն պայմաններն ապահովելու անհրաժեշտ միջոց, պարզ կդառնա, որ բնապահպանական խնդիրների անտեսումը հղի է լուրջ վտանգներով, նույնքան (գուցե եւ ավելի) լուրջ, որքան Հայաստանի առաջ կանգնած քաղաքական ու տնտեսական հիմնախնդիրները:

Արարատյան դաշտը, որտեղ կենտրոնացված են հանրապետության ամենաբերրի հողերը, ստորգետնյա ջրերի ամենամեծ պաշարները եւ հանրապետության բնակչության մոտ կեսը, բնապահպանական առումով լուրջ վտանգի առաջ է կանգնած: Եւ անհրաժեշտություն չկա բացատրել, թե այս առումով ցանկացած հաղորդում կամ անուշադրություն ինչ հետեւանքներ կունենան ամբողջ հանրապետության համար: Խոսքս առաջին հերթին վերաբերում է Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերին: Անկախության առաջին քայլերն անող պետության համար առաջնահերթ խնդիրներից մեկը սեփական հնարավորությունները ճշտելն ու դրանք լավագույնս օգտագործելն է: Այս առումով մեր սակավաջուր ու լեռնային երկրի համար ջրի պաշարները կարեւորագույն ստրատեգիական հումքի նշանակություն են ձեռք բերում: Իսկ ի՞նչ է արվում դրանք պահպանելու եւ արդյունավետ օգտագործելու համար: Ցանկացած պետություն պետություն է առաջին հերթին համապետական նշանակության խնդիրները վճռելու մենաշնորհով եւ այդ առաջադրանքում առաջնայինը երկրորդականից զանազանելու կարողությամբ ու մասնավորը համընդհանուրին ստորադասելու հետեւողականությամբ: Եւ հենց այստեղ է, որ այսօրվա թերացումները վաղը չեն ներվելու:

Արարատյան դաշտի ստորգետնյա ջրերի եւ հողերի պահպանման ու օգտագործման հարցերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար որոշեցինք դիմել «Հայջրտնս» հանրապետական գիտաարտադրական միավորման բաժնի վարիչ Գեորգի Չորանյանին: Նա չցանկացավ հայտնել Արարատյան դաշտի ստորգետնյա ջրերի քանանուր պաշարները պատճառաբանելով, թե դրանք գաղտնի թվեր են: Ասաց միայն, որ այդ ջրերը տարածվում են հիմնականում Արմավիրի, Էջմիածնի եւ Մասիսի շրջաններում: Դրանց օգտագործումն առավել թափ է ստացել հատկապես 50-ական թվականներից սկսած: *«Առ այսօր գործում են մի քանի հազար հորատանցքեր, որոնցից մի մասը շատրվանային: Ամբողջ հարցն այն է, որ այսօր Երեւան քաղաքի եւ Արարատյան դաշտի քաղաքների խմելու ջրի մեծ մասը ստացվում է ի հաշիվ Արարատյան դաշտի ստորգետնյա ջրերի: Դրանք հիմնականում երեք ջրհան կայաններ են՝ Ռանչպարի, Կաղցրաբերդի եւ Գայ-Հայկավանի: Բայց այսօր Արարատյան դաշտում գործում են բազմաթիվ կոմպերատիվ ձկնաբուծական տնտեսություններ (մոտ 40), որոնք օգտագործում են նույն ստորգետնյա ջրերը: Այդպիսի տնտեսություններ կան նաեւ վերոհիշյալ ջրհան կայանների տարածքում: Դրանք պարզապես Երեւանի խմելու ջրի «հերն անիծում են»: Մեկ տոննա ձուկ ստանալու համար անհրաժեշտ է 300 մլն. լիտր ջուր: Իհարկե, բոլորն էլ ուզում են ձուկ ուտել, բայց պետք է հասկանալ, որ խմելու ջուրն ավելի կարեւոր է: Եթե այսպես շարունակվի, փաստի առաջ ենք կանգնելու: Մենք բազմիցս դիմել ենք իշխանություններին՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ փաթեթ, բայց դրանք որոշումների տեսք չեն ստացել:*

Արարատյան դաշտն այսօր ամբողջովին կառուցապատված է: Ո՞ւր են լցվում կոյուղու կեղտաջրերը: Իհարկե, խառնվում են նույն ստորգետնյա ջրերին, որոնք ապահովում են Երեւանի խմելու ջուրը: Իսկ վաղը, երբ համաձարակ սկսվի, բոլորս զարմանալու ենք:

Վերջապես պետք է սանիտարական վերահսկողություն սահմանել խմելու ջրի հիմնական ավազանների վրա: Բացառված չէ, որ ինչ-որ մեկը կարող է պարզապես թունավորել դրանք: Թույնը գուցե եւ հայտնաբերվի, բայց դրանից ի՞նչ օգուտ: Չէ՞ որ կաղտոտվի ամբողջ ավազանը:

Հողերի մասին: Այդ նույն կոմպերատիվ ձկնաբուծական տնտեսությունները փաստորեն լճակային տնտեսություններ են, իսկ այդ լճակները կառուցված են այնպես, որ հաճախ դրանց մակարդակները բարձր են լինում գետնից: Դրա հետեւանքով բարձրանում է նաեւ ստորգետնյա ջրերի մակարդակը: Արդյունքում առաջանում են ադուտներ: Ժամանակին պետությունը վիթխարի միջոցներ ծախսեց Արարատյան դաշտի զգալի տարածություններ ադազերծելու նպատակով, իսկ այժմ հակառակն է արվում: Ոչ ոք չի հասկանում, թե ինչ է կատարվում: Մի՞թե ձուկն ավելի կարեւոր է»:

Իհարկե, մենք չէ, որ պիտի որոշենք, թե որն է կարեւորը: Կարեւորն այն է, որ որոշողներ լինեն եւ որոշեն՝ հաշվի առնելով բոլոր թեր եւ դեմ կողմերը: Բարձիթողի վիճակը եւ միայն օրվա շահով հետաքրքրվող գործողությունները հետագայում կարող են շատ թանկ արժենալ: Վերջին հաշվով, Արարատյան դաշտը տնտեսական առումով մեր հանրապետության ողնաշարն է եւ վաղվա տնտեսական անկախության առայժմ ամենամեծ կղվանը:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ավդուռ գյուղը կանգուն է թշնամու հարվածների դեմ

Արցախի Մարտունու շրջանի Ավդուռ գյուղը գտնվում է Աղդամի շրջանի Արդալ եւ Գյուլափլու գյուղերի մոտակայքում: Աղդամից նրա հեռավորությունը 10-12 կմ է, եւ սկսած Արցախյան շարժման սկզբից գյուղը շարունակ ընդհարումների մեջ է: Ավդուռ գյուղում ներկայումս չկա մի տեսք, որը կանգուն լինի: Գյուղը գնդակոծվել է նռնականետներով, «Ալազան» եւ այլ տիպի հրթիռներով, գնդացիրներով, մեծ ու փոքր տրամաչափի հրանոթներով եւ առաջին գյուղերից է, որ ենթարկվել է «Գրադ» կայանքի հմազարկերի ավերածություններին: Չնայած ազերական ջոկատների համառ ջանքերին, Ավդուռը մինչեւ հիմա թշնամու ոտք չի տեսել, ավելին, մտնելով Արդալ եւ Գյուլափլու գյուղերը, մի քանի անգամ ոչնչացրել է այդ գյուղերում տեղակայված թշնամու կրակակետերը: Վերջին անգամ Ավդուռը հարեւան Կաղարծի, Մյուրիշեն, Նորշեն գյուղերի հետ ենթարկվել է ազերական Cy-25 ինքնաթիռի գրոհին:

Ավդուռը փոքր գյուղ է, ընդամենը 45 ծուխ, որի 20-25 հերոսամարտիկներ, տարբեր տեղերից օգնության եկած մի քանի քաջ համագյուղացիների հետ աչալրջորեն հսկում են գյուղի տարածքները: 1992 թ. փետրվարից սկսած, երբ գյուղը ենթարկվում էր «Գրադ» կայանքի անընդմեջ հարվածներին, որոշվեց կանանց եւ երեխաներին տեղափոխել հարեւան ավելի ապահով գյուղերը, իսկ գենք բռնող տղամարդիկ մնացին գյուղում: Մեծ են գյուղի կորուստները: Դեռեւս թարմ է դպրոցահասակ 5 երեխաների մահվան ցավը, միայն գյուղը հսկող քաջ տղաներից 10-15 հոգի վիրավորվել են, սակայն բոլորն էլ առողջանալուց հետո նորից վերադարձել են մարտական դիրքեր: Պետք է նշել, որ ընկրված 1988 թվից գյուղը չի լքել ոչ մի ավդուռցի ընտանիք, ավելին, մի քանիսն էլ գյուղ են վերադարձել: Ավդուռը հերոսաբար է դիմացել նաեւ տանկային գրոհներին:

Արցախում եւ հատկապես Մարտունու շրջանում մեծ ոգեւորությամբ են խոսում ավդուռցիների տոկունության եւ քաջության մասին, նույնիսկ թշնամին այն կարծիքին է, թե ավդուռցիները միայն քարերով կարող են կասեցնել տանկերի գրոհը, որովհետեւ լավ են դիրքավորված եւ միասնական են, ժամանակին օգնության գնալով հարեւան հայկական գյուղերին, անհրաժեշտության դեպքում աջակցություն են ստանում հարեւան Մյուրիշեն, Հացի, Կաղարծի, Ասան եւ այլ գյուղերից ու կարողանում են դիմակայել թվապես եւ տեխնիկապես մի քանի անգամ գերազանցող թշնամուն: Արժե հիշատակել քաջորդիներ Ս. եւ Մ. Պողոսյանների (հայր եւ որդի, մի որդին զոհվել է), Վ. Վանյանի, Ա. Ավանեսյանի եւ շատ շատերի անունները, որոնք Գ. Ամիրխանյանի ղեկավարությամբ արդեն 4 տարի է դիմակայում են թշնամուն:

ԼԵՎՈՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Էլչիբեյ. «Մեզ հաջողվեց կասեցնել կյանքի շատ բնագավառների անկումը»

Աբուլֆազ Էլչիբեյն Ադրբեջանի նախագահի պաշտոնում իր գլխավոր հաջողությունն է համարում այն, որ *«նոր ղեկավարությանը հաջողվեց կասեցնել կյանքի շատ բնագավառներում անկումը»*: Նրա կարծիքով, *«մոտակա 4-5 ամիսների ընթացքում իշխանություններին կհաջողվի կայունացնել էկոնոմիկայում տիրող իրադրությունը»*: *«Միայն դրանից հետո մենք կգնանք խորհրդարանական ընտրությունների»*, ընդգծեց նախագահը:

Էլչիբեյը ելույթ ունեցավ հինգշաբթի օրը Բաքվում կայացած ԱԺԵ-ի ստեղծման երրորդ տարեդարձին նվիրված նիստում, որի նախագահն է մինչ օրս:

Խոսելով ազգային դրամի մասին, որը շրջանառության մեջ կմտնի օգոստոսի 15-ից, Ա. Էլչիբեյը հայտնեց, որ «մանաթները» արդեն պատրաստ են: Նրանք «կքայլեն» ռուսական ռուբլուն զուգահեռ: Նրա խոսքերով, Ադրբեջանում առաջիկայում աշխատավարձի մի մասը կտրվի ռուբլիով, մի մասը՝ «մանաթներով»: Վալյուտան մտցվում է կանխիկ դրամի դեֆիցիտը վերացնելու համար, ասաց Էլչիբեյը: ■

Բաքուն մասնացույց է անում ԵԱՀԽ-ին եւ ՆԱՏՕ-ին

Ադրբեջանի նախագահի միջազգային հարցերով խորհրդական Վաֆա Գուլուզադեն, ելույթ ունենալով բրիֆինգում, որը նվիրված էր Հելսինկիում կայացած եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության արդյունքներին, ասաց. **«Աշխարհի նոր կարգուկանոնի առկայությամբ միջազգային կազմակերպությունները ձեռք են բերում նոր նշանակություն՝ դրանք կազմակերպչական դեր են խաղում, ընդունելով գործնական որոշումներ»**:

Գուլուզադեի կարծիքով, ԵԱՀԽ-ը ներկայանում է որպես միջազգային կազմակերպություն, որը կոչված է իրականացնելու խաղաղ հարաբերություններ եւրասիական շրջանում՝ կոլեկտիվ մտածողության հիմքի վրա:

Անվտանգության բնագավառում որպես համագործակցության նոր ատր, Գուլուզադեն նշեց ՆԱՏՕ-ի զորքերի մասնակցության հնարավորությունը որեւէ պետության կողմից ագրեսիայի կանխման գործում: ■

Ադրբեջանը ճշտում է երկնային սահմանները

Ադրբեջանի Ազգային խորհուրդն ընդունել է Ադրբեջանը քաղաքացիական ավիացիայի միջազգային կոնվենցիային միանալու որոշում: Քաղաքացիական ավիացիայի միջազգային կոնվենցիայի օգնությամբ Ադրբեջանը հույս ունի լուծել ավիացիայի բնագավառի խնդիրները:

Սոչի ժամանակներս հանրապետությունը մտադիր է հաստատել երկնային իր սահմանները: Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կառավարման պետ Ադալյաթ Ալիեւի կարծիքով, միայն մեկ ամսվա ընթացքում երկրի երկնքով ուղիղ պետությունների ինքնաթիռների անվճար թռիչքների պատճառով Ադրբեջանը կորցնում է երեք հարյուր հազար դոլար: ■

Ռազմական Ան-12-ն անտարֆ վիճակում էր

Թբիլիսի, 16 հուլիս.- **«Նախիջեւանից Ռոստով թռչող Ան-12 ինքնաթիռի վթարի պատճառը տեխնիկական անսարքությունն էր: Դիվերսիան բացառվում է»**, կարծում է Անդրկովկասյան զինկոմկոմի հրամանատարի տեղակալ Սուֆիան Բեդոդաեւը:

Ինչպես հայտնի է, հուլիսի 14-ին Նախիջեւանի օդանավակայանում վթարի ենթարկված ինքնաթիռը Ռոստով էր տեղափոխում զինծառայողների ընտանիքներին: Ճգտված տվյալներով, 41 ուղեւորներից 36-ը զոհվել են, հինգը ծանր վիրավորվել:

Իրենց հերթին, ինչպես «Սնարֆ»-ին հայտնի դարձավ «Իմա-պրես» գործակալությունից, Նախիջեւանի զինվորական դատախազության ենթադրությունները եւ Ադրբեջանի ավիակոնցեռնի հատուկ հանձնաժողովը ձեռնամուխ են եղել միջադեպի ենթությանը: Հաստատված առաջին հայտարարությունների, վթարի պատճառը գերծանրաբեռնվածությունն է եղել: Օդ բարձրանալուց հետո ինքնաթիռը բախվել է մոտակա բլրին: ■

Ադրբեջանը սեփական վալյուտա է մտցնում

Ադրբեջանի ազգային վալյուտան՝ «մանաթը», հանրապետությունում շրջանառության մեջ կմտցվի 1992 թ. օգոստոսի 15-ից: Դրա վերաբերյալ հրամանագիրը յորեքշաբթի օրը ստորագրել է Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը:

Հրամանագրի համաձայն, մանաթի հարաբերությունը ռուբլուն 1:10 է: ■

Բարձր դրույքներ պաշտոնատարներին

Ադրբեջանի միլլի-մեջլիսը հուլիսի 15-ին սահմանեց նոր դրույքներ հանրապետության բարձր պաշտոնատար անձանց համար: Այսուհետեւ նախագահն ամսական կստանա 25 հազար ռուբլի, խորհրդարանի քարտուղարը՝ 20 հազար, նրա առաջին տեղակալը՝ 18 հազար, տեղակալը՝ 16 հազար, խորհրդարանի անդամները, դրանց թվում նաեւ ժողովրդական հանձնաժողովների նախագահները՝ 12-13 հազար ռուբլի: ■

digitised by A.R.A.R.@

Մենք նույն ծառի ճյուղերն ենք

Արցախյան վերջին իրադարձությունները, կապված Շահումյանի եւ Մարտակերտի հետ, նոր ալեկոծություն առաջացրին հասարակության մեջ: «Մեղադրողների» եւ «մեղադրյալների» վրա ավելացան նորերը: Այս անգամ երջապտույտի մեջ ընկան դարձյալ տնից-տեղից կտրված, փախստականների կնիքը ճակատին, այս կամ այն երջանում «իրենց արեւի ձենն ածող» արցախցիները: Գիտենք, որ հոգեկան ու ֆիզիկական ահռելի ցնցումից դեռ մինչեւ վերջ ուշի չեկած այդ մարդկանց ցույց է տրվում նյութական ու բարոյահոգեբանական օգնություն, ինչքան հնարավոր է այս օրերին: Եվ բոլորովին էլ ինձ իրավունք չէի վերապահի նման տողեր գրել, եթե մինչեւ հիմա էլ ականջումս չլինեին հնամաշ հագուստով ու կոշիկներով 66-ամյա շահումյանցի ծերունու դառնացած խոսքերը, որը «չոլախ ոտով, կարկատած կոշիկներով» մի կերպ հասել է Հայաստան, անընդհատ բնավ էլ չմտածելով, թե դեղերի բերումով իր փախստական դառնալը ցեխի նման դեմին էին շպրտելու: Երեւանի փողոցներից մեկում հանդիպած երիտասարդի խոսքերը ծերունու համար հայհոյանքից էլ ծանր էին. *«Մեր ժողովուրդը ձեզ համար ընդեղ կոտորվում ա, դուք ըստեղ ֆոֆոում եք»...*

«Մեր ժողովուրդը»... Այս արտահայտությունը գալիս է հաստատելու շատերի այն մտայնությունը, գուցե եւ իրենցից անկախ, թե Ոսկեդարը, Այգեդարը, Կիրանցը, Կոռնիձորը միայն Նոյեմբերյանի, Տաուշի, Իջեւանի, Գորիսի սահմաններն են եւ ոչ թե Հայաստանի... Եւ ուրեմն, այս տրամաբանությունից ելնելով, կարելի է մտածել, որ եթե բենզինի մեքի Մեղրի, ապա այլեւս այնտեղից ոչ մի քայլ առաջ չի գա. դեղի երեվան...

Շահումյանցի ծերունին, որ գրրալանում մի հացի փող էլ չուներ, վերոհիշյալ «ասպետի» խոսքերից հետո որքան էլ հիշի, որ Շահումյանում իր հողի համար կռվում է նաեւ ոչ շահումյանցին, այնուամենայնիվ, նրա հոգում ցավոտ հետք կթողնեն իրեն շպրտված խոսքերը: Որովհետեւ սրտի վերքը մարմնի վերք չէ... Իսկ երբ կհանդիպի Աբովյան փողոցի երկայնքով մեկ հյուր ու «Պլոմբիր» եւ «Էսկիմո» վաճառող վայելչագեղ տղերքի, որոնք երեկոյան լուրերի հաղորդման ժամանակ հաշվում են, թե ինչքան փող են «ջփել», նորից խղճահարությամբ ու ցավով կլցվի միտքը բերելով, թե ինչպես ավտոբուսում մի խումբ շահումյանցիներ, ամոթից գլխիկը մըտնելով, տոմսավաճառին ասացին, որ փող չունեն, շահումյանցի են, սա զայրացած սաստեց, թե՝ զզվացրիք դուք էլ, ինչի՞ եք եկել, որ... Ու իրենց ծարահաս, անուշ ոգաստխանը՝ *«Այ կրակվեք, բա դուք խիղճ ունե՞ք»*, եղավ այն միակ բացատրությունը, որ ոչ ոք սեփական կամքով չի թողնում տարիների աշխատանքով ստեղծած իր տուն ու տեղը, *«մալ ու դովլաթը»*, հագուստ-կոդուսը, եւ գաղթական, հետն էլ կոչումով՝ փախստական, վիճակով՝ չքավոր դառնում... Իսկ «Երազներում» հանգրվանած ոչ փախստական տղերքը համբուրգեր ու Ղարսի խորոված են վաճառում «Դոնալդ» ծամելով ու «Ֆիրմա» ծխելով, մեկմեկ էլ «գերմանական ոիվով» բարմանալով:

Մարդկությունը հարազատի, հարեւանի, բարեկամի նկատմամբ ամենից առաջ հոգեկան ու բարոյական աջակցությամբ է դրսեւորվում: Այդ վերաբերմունքով է չափվում մարդկային հոգու մեծությունը ու նրա ունայնությունը: Եւ դրա բացակայությամբ նյութական օգնությունն անջուր տեղում սերմեր ցանելու նման է: Հիմա այն վիճակն է, երբ ջերմության ամեն մի հյուլե կրակն անբեջ պահելու զորեղ ուժ է: Իսկ սառնության փոքրիկ նշույլն իսկ այն հանգցնելու սպառնալիք:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հե՞շտ է արդյոք Հայաստանում բիզնեսմեն լինելը

Մեր թղթակցի հարցերին պատասխանում է Հայաստանի Հանրապետության ձեռներեց մարդկանց միության նախագահ ՀԱՄԼԵՏ ԱՍՐՅԱՆԸ

– Հանրապետությունում ներկա տնտեսական դժվարին պայմաններում հատկապես աչք է ծակում ձեռներեցությամբ զբաղվող մարդկանց համեմատաբար բարեկեցիկ ապրելակերպը: Ասացեք, իսկ դյուրի՞ն է մեր հանրապետությունում գործ սկսեն ու այն ընդլայնելը:

– Սարսափելի դժվար է: Հայաստանում մինչեւ այժմ գոյություն չունի բանկային նորմալ համակարգ՝ բոլորս էլ գիտենք, որ խորհրդային 70 տարիների ընթացքում սեփական աշխատանքով դրամական զգալի միջոցներ կուտակել պարզապես հնարավոր չէր: Եւ այսօր սեփական գործ բացել ցանկացող յուրաքանչյուր ոք առաջին հերթին հայացքն ուղղում է դեպի բանկերը, բայց վարկեր ստանալու հնարավորությունը գործնականում զրոյի է հավասար:

Ոչ թե հոգուս, այլ հիմնականում գործարար մարդկանց ի վնաս են գործում ձեռներեցությունը խթանելու կոչված օրենքները: Բայց դա չարյաց փոքրագույնն է: Գերագույն խորհուրդն աններելիորեն ուշացնում է տուկայական հարաբերությունների լիարժեք հաստատման համար անհրաժեշտ բաս օրենքներ, դրանց թվում նաեւ նարդրումների մասին օրենքը: Դրա հետեւանքով արտասահմանյան գործարարները, մեզ հետ համագործակցության մեջ մտնելով, չեն ջատում Հայաստանում կապիտալ ներդրումներ կատարել: Իր հերթին կառավարությունը եւս չի կարողանում այս բացը լրացնել՝ այդ մարդկանց ոչ՝ ֆինանսական եւ ոչ՝ էլ բարոյական երաշխիքներ չի տալիս կամ, որ միեւնույն է, չի կարողանում տալ: Եթե չասենք խանգարում է, ապա ձեռներեցությանն ամենեին չեն նպաստում քաղաքական լարված վիճակը եւ դրա հետ կապված հաղորդակցման ուղիների երկարատեւ երջափակումները:

Այնպես որ, ինքներդ դատեք՝ հե՞շտ է գործարար մարդկանց համար, թե՞ ոչ:

– Մոտակա օրերին հավանաբար Գերագույն խորհրդի կողմից վերջնական տեսքով կընդունվի «Սեփականաշնորհման եւ ապաձեռնարկացման մասին» օրենքը: Ձեր կարծիքով, որքանո՞վ են այնտեղ պաշտպանված գործարարների շահերը:

– Որքան ինձ հայտնի է, ոչ այդ օրենքը ներկայացնողների եւ ոչ էլ Գերագույն խորհրդի համապատասխան հանձնաժողովում իրական ձեռներեցությամբ զբաղվող չկա: Եւ ոչ մեկի մտքով էլ չի անցել խորհրդակցել իսկական գործարար մարդկանց հետ: Արդյունքում, երկար ապասված այդ օրենքով արգելվում է կոմունիստական կոլեկտիվացման մի նոր տարբերակը՝ համաժողովրդական սեփականությունից արտադրության օբյեկտները վերածվում են ձեռնարկություններում աշխատողների սեփականության: Նորից բոլորինն է եւ փաստորեն ոչ մեկինը:

Այո, ժողովրդին ինչ-որ փոխհատուցում պետք է տրվի, իսկ դրա ամենաճիշտ ձեւը որոշակի չափի գումարներ տալն է: Ինչ վերաբերում է արդյունաբերության սեփականաշնորհմանը, ապա դա պետք է կատարվի միմիայն տուկայական մեխանիզմների համաձայն: Վստահ եմ, այդ տեսքով երկրորդ ընթերցման դրված «Սեփականաշնորհման եւ ապաձեռնարկացման օրենքը» պարզապես չի գործելու:

– Սուր բանավեճերի տեղիք է տալիս կառավարության հարկային քաղաքականությունը եւ հատկապես 28 տոկոս հավելյալ արժեքի հարկի սահմանումը: Թեեւ այն Գերագույն խորհրդում չհաստատվեց, բայց շարունակում է գործել:

– Այդ հարցերով բազմիցս հանդիպել եմ հարկային տեսչության ղեկավարների հետ: Նրանք ասում են, թե հարկերի չափը վերցված է զարգացած կապիտալիստական երկրներում գործող նորմերից: Հենց միայն այս փաստը նրանց անձեռնհասության մասին է խոսում: Մի՞թե մեր տնտեսությունն էլ ավելի վատ վիճակում պետք է հայտնվի, որպեսզի այդ մարդիկ հասկանան, որ Հայաստանն ամենեին էլ զարգացած երկիր չէ, եւ եթե պետք է համեմատել, ապա միմիայն զարգացող այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Նեղալը, Կիպրոսը...

Ինչպես կարելի է փոխառնել Ֆրանսիայի կամ ԱՄՆ-ի օրենքները, որտեղ գործում են բանկային կայուն համակարգեր, առկա են ֆինանսական-հսկայական միջոցներ ու զերհագեցած սպառողական շուկա: Եթե մի օր մեր հանրապետության տնտեսությունն այնքան զարգանա, որ աշխարհի երկրների մեջ այդ ցուցանիշով գրավենք գոնե 69-70 տեղերը, գուցե ներկա հարկաչափերը հնարավոր լինի կիրառել:

Իսկ ինչ վերաբերում է 28 տոկոս հարկին, ես ուրախ եմ, որ Գերագույն խորհուրդն այն չի հաստատել եւ ցավում եմ, որ այն շարունակում է գործել: Քանզի, ի վերջո, խփում է ազգաբնակչության գրպանին, իսկ ձեռներեցները, գների բարձրացման պատճառով, ստիպված են լինում պակասեցնել իրենց արտադրությունների ծավալները:

– Հարկային տեսչության ղեկավարներից մեկը հեռուստատեսությամբ հայտարարեց, որ ավելացած արժեքի հարկի 28 տոկոսից հրաժարվել պետությունը չի կարող, իսկ եթե ձեռներեցները ցանկանում են, որ արտադրանքի լճացում չառաջանա, գները պետք է իջեցնեն նախատեսվող շահույթի ավելի փոքր չափեր պլանավորելու հաշվին:

– Անշուշտ, դա եւս միջոց է, բայց նորից ու նորից միայն զարգացած տնտեսություն ունեցող երկրների համար... Գիտե՞ք ինչ կցանկանայի. որ հարկային տեսչության տեսական մտավարժանքներ կատարող ղեկավարներին սեփական գործ բացելու հնարավորություն տային եւ առաջարկեին գործող հարկերի պայմաններում, իրենց տեսական գիտելիքները կիրառելով, հաջողության հասնել: Հավանաբար դրանից հետո՝ նրանք ստիպված կլինեին գրքերից կտրվել եւ ավելի իրական մոտենալ ձեռներեցության խնդիրներին:

– Դուք ասվում եք նաեւ արտասահմանի գործարար շրջանակների հետ: Հետաքրքիր է, նրանք ինչպե՞ս են տրամադրված Հայաստանի նկատմամբ:

– Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում տեղի ունեցող փոփոխությունները բիզնեսի մարդկանց վստահություն են ներշնչում եւ նրանք նոր տուկաներ ձեռք բերելու նպատակով պատրաստ են կապիտալ մեծ ներդրումներ կատարել:

Բայց Հայաստանում տիրող քաղաքական լարված վիճակը, անկախ մեր կողմից տրվող հիմնավոր եւ անհիմն երաշխիքների, մեր հանրապետությունում ներդրումներ անելու այնքան էլ մեծ ցանկություն չի առաջացնում նրանց մեջ: Բայց հայ ձեռներեցները հույսը չեն կորցնում եւ մեծ աշխատանք են տանում արտասահմանյան բիզնեսմենների շրջանակներում: Օրինակ, մեր կողմից տարվող բանակցությունների արդյունքում իտալական «Բիրտուցի» ֆիրմայի ղեկավարության հետ Հայաստանում մեկ միլիարդ ամերիկյան դոլարի կապիտալ ներդրումների նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել:

Այժմ հարցն այն է, թե մեր կառավարությունը հանդես կգա՞ որպես այդ գումարների երաշխավոր: Եթե պատասխանը դրական լինի, մենք պետք է ներկայացնենք կոնկրետ ծրագիր, թե ինչ նպատակների վրա է ծախսվելու այդ խոշոր վարկը: Տեսնենք, կկարողանա՞նք մինչեւ վերջ հասցնել այդ նպաստավոր գործարքը:

– Գուցե սխալվում եմ, բայց այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ Հայաստանի գործարար մարդիկ ընդգծված կերպով իրենց հեռու են պահում քաղաքականությունից:

– Չեք սխալվում: Դա իրոք այդպես է: Ձեռներեցները եթե քաղաքականությամբ զբաղվեն, պարզապես իրենց գործերը կխափանեն եւ ժողովուրդը սովի կմատնվի: Իսկ ընդհանրապես գործարար մարդկանց համար կարեւոր չէ, թե պետության մեջ ովքեր են ղեկավար դիրք գրավում: Մեզ պետք է ազատ ծավալման հնարավորություններ ընձեռնել, պետք է պաշտպանվեն մեր շահերը: Մենք գտնում ենք, որ ներկա իշխանությունները դեռ իրենց հաստատուն խոսքը չեն ասել, բայց պարտավոր են վերջապես իրական քայլեր կատարել:

Իսկ եթե տեսնենք, որ իրականացվող քաղաքականությունը խանգարում է տնտեսության զարգացմանը, ապա այդ դեպքում այլեւս անտարբեր մնալ չենք կարող:

Հարցազրույցը վարեց
ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆԸ

Ղարաբաղում թուրքական զինվորներ ու զենքեր կան.

այս մասին «Ջումհուրիյեթ» թերթին հայտնել է Վազգեն Սարգսյանը

«Ջումհուրիյեթ»ի արտասահմանյան լուրերի պատասխանատու թղթակից Սինան Գյոքչենի Հայաստան կատարած երկու այցելությունների մասին մեր նախորդ համարներում արդեն գրել էինք:

«Ջումհուրիյեթ»ը այսօրվա թուրքական մամուլի ամենազուսպ ու հավասարակշռված թերթերից է, մանավանդ ազգամիջյան հարցերով, դրա համար մենք ընդունեցինք նրա թղթակցի հետ համագործակցելու առաջարկը եւ կազմակերպեցինք նրա հայաստանյան հանդիպումները:

«Ջումհուրիյեթ»ում վերջերս հրապարակվել էր Սինան Գյոքչենի ահա այդ հանդիպումներից մեկը Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հետ, որը արվել էր Գորիսի զինվորական շտաբում: Այս հարցազրույցի շնորհիվ, առաջին անգամ թուրքական մամուլում լայն տեղ էր տրվում Հայաստանի պաշտոնական մի անձի, որը կապված է հայտնում Ղարաբաղում «թուրք զինվորների եւ զինամթերքի գոյության» մասին:

«... Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանն ասաց, թե, ըստ իրեն հասած տեղեկությունների, Ղարաբաղում հայերի դեմ կռվում են նաեւ Թուրքիայից եկած որոշ զինյալ խմբեր: «Այս տեսակի լուրեր ինձ նույնպես հասել են, ասում է նախարարը: Մենք տեղեկություն չունենք նրանց մասին: Չեմ կարծում, թե նրանք թուրքական բանակի զինվորներ են, նրանք կարող են Թուրքիայից եկած կամավորներ լինել: Սակայն ինձ ասվել է, որ մի անգամ, երբ ազերիները եւ հայերը դիակներ էին փոխանակում, թուրքական բանակի համազգեստ կրող զինվորներ են ներկա եղել»:

Բացի դրանից, նախարարը տեղեկացրեց նաեւ, գրում է Ս. Գյոքչենը, թե հայ զինվորների ձեռքն էր ընկել թուրքական բանակին պատկանող մի հակատանկային եւ մի ավտոմատ հրացան: «Կացությունը թողնվին այլ է Նախիջեւանում, ասում է նախարարը: Սադարակի շրջանում, օրինակ, կարող եք տեսնել թուրք զինյալ խմբերի»:

Հարցազրույցի վերջում Վազգեն Սարգսյանը նույնպես հավաստում էր, թե *«Հայաստանի նոր իշխանությունները Թուրքիայի հետ լավ հարաբերությունների կողմնակից են»:*

Ռ. Հ. Ա.

Մարդասիրության առաջամարտիկը



1988 թ. դեկտեմբերյան կործանիչ երկրաշարժն իր ողբերգական չափերով ցնցեց աշխարհը: Շատերը օգնության ձեռք մեկնեցին եւ նրանց մեջ առաջինների թվում էր նաեւ շվեդական փրկարար ջոկատի կազմում Հայաստան ժամանած սկանդինավյան այդ երկրի առողջապահության նախարարության վարչության պետ Գյունտեր Վենստրոնը:

Մեծ էր մեր ժողովրդի ցավը եւ կարճ ժամանակում անհնար էր այն դարմանել: Պարոն Վենստրոնը, տեսնելով այդ ամենը, մեկնում է իր հայրենիքը եւ կարճ ժամանակ անց վերադառնում՝ այս անգամ արդեն բժիշկներից կազմված խմբի հետ:

Դրանով չի սահմանափակվում շվեդ բժշկի առաքելությունը. նա երկրաշարժից հետո անցած վեց ամիսների ընթացքում եւս երկու անգամ մարդասիրական օգնություն է բերում Հայաստան:

Այդ օրերից տարիներ են անցել: Ժամանակը եւ աշխարհում տեղի ունեցող նորանոր աղետներն ու հակամարտությունները մոռացության մատնում են պատում Սպիտակի երկրաշարժի պատճառած անընդգրկելի ցավն ու վնասները: Եւ նման իրավիճակում հաճելի է իմանալ, որ Գյունտեր Վենստրոնը եւ նրա հայրենակիցներից շատերը ոչ միայն հիշում են հայությանը բնության կողմից հասցված հարվածը, այլեւ, տեղեկանալով Հայաստանում եւ Արցախում տիրող վիճակի մասին, մարդասիրական մի նոր օգնության նախաձեռնողներն են դարձել: Արդեն տեղ է հասել 300 կգ դեղորայքը: Շուտով «Հերկուլես» ինքնաթիռով բժշկական սարքավորումներ եւ սննդամթերք կուղարկվի, որի հասցեատերերը մեր հիվանդանոցներն են ու Արցախը:

Դժվար օրեր է ապրում անկախացած Հայաստանը. դեռ մի վերքը չբուժած նորերն են առաջանում: Նման պայմաններում արտասահմանից եկած ցանկացած աջակցություն անգնահատելի արժեքի է վերածվում:

Բայց հավատացած ենք, որ կգա այն ժամանակը, երբ մեր հանրապետությունը կուղղի իր մեջքը եւ մի մեծ խնջույքի սեղանի շուրջ կհավաքի հայ ժողովրդի բոլոր բարերարներին ու առաջին կենացը մարդասիրությանը կնվիրի, որը սահմաններ չի ճանաչում ու ազգերին մերձեցնելու անօրինակ ուժ ունի:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Հայտնի լոբբիստ Բերրի Զորյանը պատասխանում է «Ազգ»ի հարցերին

«Եթե լավատես չլինեմ, տանուլ կտանք ամեն ինչ»

Վերջերս Հայաստանում էր ամերիկահայ հայտնի մեդիամեն (լրատվական աշխարհի մարդ), լոբբիստ, ամերիկյան պետական շրջանակներին եւ քաղաքականությանը քաջածանոթ անձնավորություն, ՀԲԸ Միության կենտրոնական վարչական ժողովի անդամ ԲԵՐՐԻ ԶՈՐՅԱՆԸ: Նրա հետ մեր աշխատակից ՀՈՎԻԿ ԷՈՐԴԵՔՅԱՆՆ ունեցավ մի ընդարձակ հարցազրույց, որի գլխավոր մասերը թարգմանաբար ներկայացնում ենք ստորեւ:



– Պարոն Զորյան, որպես կառավարական պաշտոնական անձնավորություն եւ որպես մեկը, որ անընդհատ գործ է ունեցել զանգվածային լրատվության հետ, չէ՞ք պատմի ձեր արմատների եւ անցած ուղու մասին:

– Անցած ուղո՞ւ: Դե, ես արդեն բավական առաջացած տարիքում եմ, եւ այն շատ կողմեր է ընդգրկում: Որպես կառավարական ծառայող ես իմ կյանքն սկսել եմ նավատորմից, որտեղ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ընդունվել եմ որպես շարքային զինվոր եւ հետագայում հրամանատարի աստիճանով դուրս եկել այնտեղից: Դրանից հետո մի քանի տարի զբաղվել եմ լրագրությամբ, իսկ այնուհետեւ 13 տարի աշխատել եմ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանում, որն, ինչպես գիտեք, ամերիկյան կառավարության պաշտոնական ռադիոծրագիրն է: Այնտեղ հինգ տարի շարունակ ղեկավարել եմ ծրագրերը, բոլոր ծրագրերը, այդ թվում նաեւ հայերենը, որն սկսեց գործել իմ օրոք: Հետո աշխատանքի եմ անցել արտասահմանյան ծառայություններում եւ երեք տարի անցկացրել Հընդկաստանում, որպես դեսպանատան կցորդի հասարակական աշխատանքների գծով տեղակալ: Այդ պատերազմի ժամանակ տեղափոխվել եմ Վիետնամ, որտեղ 4–4,5 տարի ծառայել եմ որպես բոլոր տեսակի կարգի լրատվական, մշակութային եւ հոգեբանական ծառայությունների կառավարիչ: Ընդանիքս ինձ հետ է եղել Վիետնամում որոշ ժամանակ միայն, այնուհետեւ տեղափոխվել է Ֆիլիպիններ եւ ես փաստորեն այնտեղ էլ եմ ծառայել: Քանի որ արձակուրդներին ստիպված էի մեկնել այնտեղ՝ նրանց տեսնելու: Այնուհետեւ միացա *Թայմ-Ինֆորմեյշընին*, այն, որ հիմա կոչվում է *Թայմ-Ուորներ* եւ 12 տարի աշխատեցի լրատվական ասպարեզում, նախ որպես *Թայմ-Լայֆ* ռադիոհաղորդման ղեկավարիչ (իսկ այդ ամբողջ տարիների ընթացքում ես փոխնախագահն եմ եղել *Թայմ-Ինֆորմեյշընի*), որի ընթացքում մենք սկսեցինք իրագործել կաբելային՝ այսպես կոչված խղճացնի հաղորդումները: Այդ տեղափոխվեցի Վաշինգտոն եւ 5 տարի աշխատեցի որպես *«Թայմ»*-ի կառավարական բաժնի փոխնախագահ:

– «Թայմ» հանդեսի՞...

– *Թայմ-Ինֆորմեյշընը* իր մեջ ներառնում է եւ՝ *«Թայմ»* հանդեսը, եւ *«Փիփլ»* հանդեսը, եւ՝ ռադիոհաղորդումները եւ այլն: *«Թայմ»* հանդեսը դրանցից ամենաճանաչվածն է: Հետո բոլորի անցա: 1980-ից ի վեր Վաշինգտոնում աշխատում եմ հասարակական հարաբերությունների ոլորտում, այս կամ այն ձեւով խորհուրդներ տալիս: Ժամանակ առ ժամանակ, օրինակ, ինձ գործուղում են Օման, Թայլանդ, Կորեա, Կիպրոս, Լիբանան եւ այլ երկրներ տեղի կառավարություններին աջակցելու նպատակով: Այժմ ես ավելի շատ ժամանակ եմ հատկացնում Հայաստանին եւ Ամերիկայում հայկական կազմակերպություններին հուզող հարցերին: Արդեն 50–51 տարի է, ինչ ավարտել եմ բոլոր, այդ պատճառով էլ գործունեությանս ոլորտը այնքան մեծ է:

– Իսկ Ձեր արմատնե՞րը:

– Ծնվել եմ Թուրքիայի Քյոթահիա քաղաքում: Ծնողներս հեռացել են Թուրքիայից, երբ ես շատ փոքր էի, Երեւան: Որոշ ժամանակ ապրեցինք Հունաստանում, հետո մեկ տարի Իտալիայում, մինչեւ վիզա ձեռք բերեցինք անցնելու Նահանգներ: Եկել եմ Նյու Հեյվընի քաղաքում, որտեղ գտնվում է Յեյլի համալսարանը: Ավարտել եմ այդ համալսարանը, այնուհետեւ նաեւ Նյուհեյվենի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այո, ես իրավաբան եմ, բայց գործնականում երբեք չեմ զբաղվել դրանով: 50 տարին, ինչպես ասացի, երկար ժամանակաշրջան է եւ շատ բան է անցել իմ գլխով: Միշտ կողմնակից եմ եղել՝ հայկական կազմակերպված աշխատանքներ տանելուն, բայց Նյու Հեյվընում շատ քիչ հայեր են եղել եւ ես բնականաբար հայկական մթնոլորտում չեմ մեծացել: Տանը հայերեն խոսել ենք, բայց դա շատ վաղուց էր, 1940-ական թվականներին: Այժմ ամեն ինչ ես է գալիս: Երբ մի քանի շաբաթ եւս Երեւանում աշխատեմ, ամեն ինչ իր տեղը կընկնի: Դանդաղ, բայց հաստատ կերպով ամեն ինչ կվերադարձավորվի: Բայց 1970-ից ի վեր ես Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության անդամ եմ: Անդամ եմ Նյու Յորք քաղաքի Հայկական եկեղեցու եւ վերջերս նաեւ Հայաստանի Ամերիկյան համալսարանի հոգաբարձուների խորհրդի: Մոտ 5 տարի աշխատակցել եմ Ամերիկայի Հայկական համագումարի հետ, այնտեղ տնօրենների ժողովի նախագահն էի:

– Ասում են, որ դուք Բուշի կառավարությանն ամենամոտիկ կանգնած հայն եք: Չէի՞ք ներկայացնի Հայաստանի մասին Բուշի կառավարության տեսակետները:

– Ես հավակնություն չունեմ ասելու, որ Բուշի կառավարության ամենամոտիկ կանգնած հայն եմ: Ճիշտ է, ես պաշտպանել եմ նրան նախագահական ընտրապայքարում դեռեւս 1980 թվականին, երբ նա պարտվեց Ռեյգանին եւ ընտրվեց փոխնախագահ: 1984 եւ 1988 թվականներին դարձյալ պաշտպանել եմ նրա թեկնածությունը: Այս տարի ես որոշ գործ կատարում եմ նրա վերընտրության առնչությամբ: Բայց կան բազմաթիվ այլ հայեր, որոնք գործակցել են Ռեյգանի, իսկ այժմ ակտիվորեն աշխատակցում են Բուշի կառավարության հետ: Նահանգապետ Ջորջ Դոմինիկյանն, իհարկե, նրանցից ամենաճանաչվածն է: Քեն Խաչիկյանը Ռեյգանի նախագահության ժամանակ գրում էր նրա ճառերը: Նա հիմա էլ բավական ակտիվ է Հանրապետական կուսակցության քաղաքականության մեջ: Նա սենատորական մի արշավ է ծավալել Կալիֆորնիայում: Այնուհետեւ Չիկ Քըրբայանը, որ կոնգրեսմեն էր Կալիֆորնիայից, եւ շատ ուրիշներ: Այնուամենայնիվ, Վաշինգտոնում լինելով, ես մոտիկ կապ եմ պահպանել կառավարական աղարտի հետ: Հաճախ եմ հանդիպում ամերիկացի պաշտոնական անձնավորությունների հետ:

Վերջին շրջանում հայերի հետ հանդիպումների ընթացքում Բուշի կառավարությունը շեշտել է, թե բարեհաճ վերաբերմունք է ցուցաբերում Հայաստանի-Հանրապետության եւ նրա կառավարության նկատմամբ, քանի որ այս վերջինը ռազմավարական ընտրություններ արդյունք է եւ առայժմ կայուն է: Այն չի անցել այն քաղաքական քաոսի վիճակը, որը բնորոշ է Վրաստանին, Ադրբեջանին, Ղազախստանին, Տաջիկստանին, Մոլդովային եւ այլն: Հայաստանի ռազմավարական այդ գործընթացն ու քաղաքական կայունությունը շատ կարեւոր ձեռքբերումներ են, դրական հատկանիշներ, որոնց խիստ հոժարակամորեն է վերաբերվում Բուշի կառավարությունը: Սա բնավ էլ կողմնակցական քաղաքականություն չէ, եւ եթե վաղը Ամերիկայում դեմոկրատական կուսակցությունը իշխանության գլուխ գա, այն նույնիսկ վերաբերմունք է ունենալու Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Որովհետեւ, եթե կառավարության քաղաքականության փոփոխությունը կարող է ազդել, ասենք, Իսրայելի կամ Պաղեստինի հետ Ամերիկայի հարաբերությունների վրա, կամ Խ. Միության հետ կնքված միջուկային սպառազինությունների կրճատման պայմանագրերի վրա, կամ նույնիսկ Ճապոնիայի հետ առեւտրական հարաբերությունները շարունակելու վրա, Հայաստանի եւ նման փոքր երկրների հետ հարաբերությունների հարցում այդ քաղաքականությունը, հատկապես սկզբնական շրջանում, հիմնականում գծագրվում է դիվանագետների, պետդեպարտամենտի եւ ազգային անվտանգության վարչության աշխատակիցների կողմից: Եւ Բուշի կառավարության վերաբերմունքը հիմնված է մեծապես նրանց հանձնարարությունների, խորհուրդների եւ գնահատականի վրա: Նաեւ անշուշտ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի անձնական շփումների վրա: Նախագահներ Բուշն ու Տեր-Պետրոսյանը կարողացել են շատ լավ հասկանալ միմյանց եւ դա նպաստել է այդ վերաբերմունքի ձեւավորմանը: Ես կարծում եմ, որ ամերիկյան կառավարությունը հարգում է Հայաստանի կառավարությանը, եւ նրա նախագահ Տեր-Պետրոսյանին, առաջին հերթին, որովհետեւ նա հետապնդում է ռազմավարական նպատակներ եւ դա կարեւոր է:

– Դուք նպաստել եք Սոֆիական տան կողմից վերջերս կազմակերպված ամերիկահայ ներկայացուցիչների հետ երկու հանդիպումների անցկացմանը: Դրանք առնչվո՞ւմ էին ներկա ընտրաշրջանի մտահոգությունների հետ, թե՞ բխում էին ամերիկահայ համայնքի հետ կապերն ամրապնդելու Սոֆիական տան նկատառումներից:

– Վերջին մի քանի ամիսների ընթացքում Սոֆիական տունը կազմակերպեց երկու հանդիպում ամերիկահայ ներկայացուցիչների հետ: Այդ պատեհություններն ստեղծվեցին իրենց կառավարության հետ ամերիկահպատակների սովորական հանդիպումների շրջանակներում եւ ունեին, իմ կարծիքով, երկու դրդապատճառներ: Նախ, որովհետեւ ընտրությունների տարի է եւ կառավարությունը քաջ գիտակցում է, որ հայկական համայնք գոյություն ունի Ամերիկայի բոլոր գլխավոր նահանգներում: Չեմ կարող ասել, որ այդ գաղափարը նրանց մտքերում չկար, բայց վստահ եմ, այս հանդիպումները միեւնույնն է տեղի կունենային ինչպես անցյալ, այնպես էլ հաջորդ տարիներին, քանի որ լուրջ իրադարձություններ են տեղի ունենում այս շրջանում: Հիմնվելով դարաբաղյան դեպքերի վրա, Ամերիկայի կառավարությունը մտադիր էր Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ իր հարաբերությունների մի ընդհանուր հասկացողություն եւ ես կառավարությանը համոզեցի, որ այդ հասկացողությունը անհրաժեշտ է պարզաբանել հայկական համայնքին, քանի որ դեպքերը կատարվում են բավական արագ եւ ոչ բոլորն են տեղյակ դրանց: Վաշինգտոնում մի քանի մասնագետներ գիտեն այդ մասին, բայց հայկական համայնքն ընդհանրապես անտեղյակ է ամերիկյան կառավարության ձեռք առած միջոցներից եւ գործունեության բնույթից: Այդ հանդիպումների ընթացքում պարզորոշ կերպով ասվեց, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները Հայաստանին համարում են իրենց լավագույն բարեկամը եւ նրան դասում նախկին Խ. Միությունից երեք առանձնաշնորհյալ հանրապետությունների՝ Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան շարքը, առավելապես որովհետեւ այս երեքը ամենակայուն քաղաքականությունն են վարում, ամենառամկավարական գործընթացներն են իրականացնում եւ ամենաառաջավորներն են: Այդ առումով Բուշի կառավարությունն անհրաժեշտ համարեց որոշ պարզաբանումներ, բացատրություններ տալ Հայկական համայնքին, եւ դա ցանկացած տարվա ընթացքում կարող էր տեղի ունենալ, բայց որ համընկավ ընտրությունների տարվա հետ, այն առավել նշանակություն ստացավ:

– Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հողաշերտերի փոխանակություն առաջարկող Պոլ Գորլի տեսությունը բավական մեծ զայրույթ առաջացրեց Երեւանում: Ինչքանո՞վ է այն լուրջ եւ արտահայտո՞ւմ է ամերիկյան կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

– Մեկընդմիշտ նշեմ, որ այսպես կոչված Պոլ Գորլի (եւ ես չակերտներ եմ ցանկանում ավելացնել դրան) «տեսությունը» ոչ մի պաշտոնական հիմք չունի եւ չի ներկայացնում Ամերիկայի քաղաքականությունը: Դա անհամաչափ մտածողության արդյունք է: Պոլ Գորլը Կովկասի եւ նախկին խորհրդային Կենտրոնական Ասիայի հանրապետությունների մասնագետ է: Նա Պետդեպարտամենտում աշխատում էր որպես խորհրդային բոլոր ազգությունների գծով մասնագետ. առավելապես կենտրոնանում էր Բալթյան հանրապետությունների վրա, բայց նաեւ զբաղվում էր մյուս շրջաններով: Բայց նա հրաժարվեց այնտեղից եւ այժմ աշխատում է «Խաղաղության ի նպաստ նվիրաբերությունների Կարնեգի կազմակերպություններում», որպես մասնագետ եւ մեկնաբան: Նա չի առաջնորդվում իսկական գիտական մտածողությամբ: Պարզապես դասախոսություններով հանդես է գալիս որոշ մեկնաբանների շարքին, սակայն առանձնանում է նրանցից այն հանգամանքով, որ տվյալ շրջանին առավել տեղյակ անձնավորություն է: Իր այդ ելույթների ընթացքում նա միշտ էլ շեշտել է հետեւյալ բառերը. *«Ես անձնապես կարծում եմ, որ...»*, կամ *«իմ դատողությամբ, որպես մեկնաբան, գտնում եմ, որ դարաբաղյան խնդրի լուծումը կայանում է տարածքատարածքների փոխանակման մեջ»* եւ նա մատնացույց է արել Հայաստանի հարավային շրջանը: Բայց, իհարկե, դա մեկ մարդու անձնական կարծիքն է, եւ ես տասը որոշ մեկնաբաններ կարող եմ վկայակոչել, որոնք նույնական հանրահայտ լինելով՝ ունենան բոլորովին այլ կարծիք: Սրանցից եւ ոչ մեկը, այսուհանդերձ, չի ներկայացնում Մ. Նահանգների պաշտոնական տեսակետը, որն ունի երկու գլխավոր դպրոց, որոնք միգուցե հակասական թվան միմյանց: Առաջինն այն է, որ սահմանները ուժի միջոցով չի կարելի փոփոխության ենթարկել, իսկ երկրորդը՝ որ ազգերի ինքնորոշման իրավունքը անհրաժեշտ է հարգել: Հարց կարող է առաջանալ, անշուշտ, թե ուժ ասելով ինչ կարելի է հասկանալ, բայց պարզ է, որ ռազմական ուժն ինքնին ուժ է: Հիշենք, որ հարցին առնչվող բոլոր երկրներն էլ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Թուրքիան, Վրաստանը, Ամերիկան ճանաչել են միմյանց սահմանները: Դրանք այդ բանն արել են, երբ դիվանագիտական հարաբերություններ են հաստատել իրար հետ եւ երբ ընդունվել են ՄԱԿ-ի շարքերը, որի կանոնադրության կետերից է մյուս անդամ երկրների սահմանների ընդունումը: Այնպես որ, ուժային դիրքերից խոսելն այստեղ ընդհանրապես բացառված է: Այս հարցում մենք բավական դժվարությունների առաջ ենք կանգնած Խորվաթիայի, Բոսնիայի նման վայրերում եւ այժմ էլ Մոլդովայում: Մ. Նահանգները նման պարագաներում միշտ էլ հետեւողական քաղաքականություն է վարել:

Ինքնորոշման խնդիրը նույնպես կարեւոր է եւ նույնպես մաս է կազմում ամերիկյան քաղաքականության: Բայց այստեղ էլ տարածության մեծության հարցն է առաջ գալիս. ասենք ինչքան մեծ պետք է լինի տարածությունը, որ ինքնորոշման իրավունք ունենա:

Ինչ վերաբերում է դարաբաղյան ճգնաժամին, Մ. Նահանգները կողմնակից են կողմերին ընդունելի խաղաղ ճանապարհով հարցի լուծման: Եթե կողմերը համաձայնվեն ինչ-որ որոշակի բանաձեւի շուրջ, նույնիսկ եթե դա հողերի փոխանակություն լինի, եթե Հայաստանի, Ադրբեջանի եւ Ղարաբաղի կառավարությունները մի կոնկրետ համաձայնության հասնեն, ապա Մ. Նահանգները ողջունելու են այն: Քանի որ դա նրանց հարցն է, եւ նրանք էլ պետք է որոշում կայացնեն: Մ. Նահանգները չի պարտադրում որեւէ մեկին որոշակի մի բանաձեւ, այլ պարզապես կատալիզատորի դեր է սանձնել, մի տեսակ միջնորդի դեր, որը կարելի է գնահատել կամ քննադատել:

Շատերն ասում են, թե Մ. Նահանգները Թուրքիային է պաշտպանում. դա ամենեւին էլ այդպես չէ: Ճիշտ է, Թուրքիան ԱՄՆ-ի դաշնակիցն է, եւ ոչ ոք դա չի թաքցնում: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, եւ որպես այդպիսին նա մեծապես օգնել է Մ. Նահանգներին Ծոցի պատերազմի օրերին: Մյուս կողմից Մ. Նահանգներում հավատացած են, որ իրենք «զսպող» դեր են կատարում Թուրքիայի հարցում: Նրանք վստահ են, որ համաձայն իր խոստմանը, Թուրքիան ռազմականապես չի միջամտի դարաբաղյան հակամարտությանը: Հավատացած են նաեւ, որ Թուրքիան իր հերթին ազերիներին է «զսպում»: Վերջապես Դեմիրելը գիտակցում է, որ իր սահմանների վրա որեւէ ռազմական առճակատում խփում է իր երկրի շահերին: Ռազմական գործողությունները բոլորին են խփում իրականում: Եւ Հայաստանի, եւ Ադրբեջանի, եւ Թուրքիայի շահերին: Իսկ Մ. Նահանգները միջնորդի դեր կատարելով փորձում է բոլոր կողմերի շահերը բավարարված տեսնել: Մ. Նահանգները այսուհետեւ եւս կարող է օգնել, բայց նա ոչ մի երկրի չի պաշտպանում: Նա պաշտպանում է միայն այն երկու սկզբունքները, որոնց մասին ես նշեցի արդեն. սահմանների անխախտելիություն եւ ինքնորոշման իրավունք, եւ հետեւում,

digitised by A.R.A.R.@

որ բոլոր շահագրգիռ կողմերն աշխատեն այդ ուղղությամբ:

– Պետդեղարտամենտում Հայկական հարցով զբաղվող բաժին կա՞:

– Նախ ճշտեմ, որ ես Մ. Նահանգների կառավարության խոսնակը չեմ: Ես դաշտոնապես չեմ ներկայացնում ամերիկյան կառավարությունը: Պարզապես տարբեր ոլորտներում իմ գործունեության բերումով ես դարավոր եմ ներկա գտնվել հանդիպումներին եւ փորձել բացատրել Ամերիկայի վարած քաղաքականությունը: Պետդեղարտամենտում, այո, կա մի ընդհանուր բաժին, որն զբաղվում է Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի հարցերով: Այն ղեկավարվում է Ռիչարդ Միլզի կողմից, որն իր հերթին զեկուցում է պետքարտուղարի փոխօգնականին: Այս վերջինը դատասխանատու է բոլոր նախկին Խ. Միության հանրապետությունների համար, բացի Մերձբալթյան երկրներից: Նրա անունը Լարի Նեփը է: Սա էլ զեկուցում է պետքարտուղարի անմիջական օգնականին՝ Թոմ Նայլզին, որը դատասխանատու է Եւրոպայի եւ նախկին Խ. Միության հարցերի համար: Թոմ Նայլզը, միգուցե, ամենագլխավոր անձնավորությունն է, որը կանխորոշում է, թե այս շրջանի համար Ամերիկան տվյալ դահին ինչ քաղաքականություն պետք է վարի: Նա զեկուցում է պետքարտուղարի տեղակալին եւ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին: Այնտեղ երկու աշխատակիցներ կան, որոնք մասնագիտացած են այս շրջանի հարցերում: Մեկը, որը հատկապես Կովկասի հարցերով է զբաղվում, կոչվում է Նիկ Բըրնզ: Նրանից բարձր, բայց նրա հետ միասին աշխատողի անունը Էդ Ջոուլի է: Նրանք իրենց հերթին դատասխանատու են զեկուցել գեներալ Սկոուքրոֆթին, որն էլ նախագահի Ազգային անվտանգության գծով խորհրդականն է:

– Խ. Միության փլուզման եւ սառը դատերազմի ավարտի հետեւանքով տազմական խմբավորումները դարձել են ոչ անհրաժեշտ: Ի՞նչ դեր է նախատեսված Թուրքիայի համար աշխարհում նոր կարգուկանոն հաստատելու դեպքում:

– Սա բավական դժվար հարց է: Ռազմական խմբակցությունների նշանակությունը որոշ չափով է միայն դարձել ոչ անհրաժեշտ: Չէի ասի, որ, օրինակ, ՆԱՏՕ-ի նշանակությունը նվազել է: Այն կարող է, եւ խոստովանենք, որ խաղում է, ռազմական կարեւոր դեր Հարավսլավիայում: Այն նմանատիպ դեր կարող է խաղալ եւ խաղում է Միջին Արեւելքում եւ այլ վայրերում, որտեղ անվտանգության եւ խաղաղության խախտման վտանգի հնարավորությունն առկա է: Ակնհայտաբար, սպառնալիքն այժմ շատ ավելի նվազ է, քան երբ Խ. Միությունը գոյություն ուներ: Սակայն Թուրքիան դեռ պահպանում է իր ռազմական հզորությունը: Իրանում, Իրանում եւ Սիրիայում դեռ գոյություն ունեն այդպիսի ուժեր: Դեռ կարելի է շարունակել, նշելով, որ յուրաքանչյուր երկիր էլ անվտանգության նկատառումներով կարիք ունի որոշակի քանակի ռազմական ուժ պահել: Թուրքիան այժմ բավական կարեւոր դեր է կատարում Մ. Նահանգների հետ գործակցելով, ասենք, Իրանում, հատկապես քրդական շրջաններում: Սա Թուրքիայի շահերից է բխում: Ամերիկայի շահերն էլ են պահանջում, որ այդ շրջանում կայունություն հաստատվի: Իրանը աղաղակո՞ւմ է այդ շրջանի անվտանգությանը հարցին կարելի է եւ դրական, եւ ժխտական դատասխան տալ: Բայց դրությունն այնպիսին է, որ Թուրքիան չի կարող մտքահան անել դրա գոյությունը եւ նվազեցնել իր ռազմական կարողությունները: Ուրիշ այլ հնարավոր «տաք կետեր» եւս կան, որտեղ Թուրքիայի ազդեցությունը, ԱՄՆ-ի աջակցությամբ, անհրաժեշտ է: Չգիտեմ, դրանք իսկական բեժ շրջանների կվերածվե՞ն, թե ոչ, բայց քանի դեռ այդ հնարավորությունը կա, երկու երկրների (Թուրքիայի եւ ԱՄՆ-ի) հարաբերությունները պետք է շարունակվեն:

– Որպես ականավոր հասարակական գործիչ, ի՞նչ խորհուրդներ կտայիք Հայաստանի կառավարությանը կազմակերպելու իր հասարակական հարաբերությունները:

– Ես այստեղ չեմ եկել թելադրելու Հայաստանի կառավարությանը, թե ինչ պետք է անի: Առանց այն էլ այդպիսիք շատ են: Հայաստանի կառավարությունն ինքն է որոշումներ կայացնում:

Հարաբերությունները, հատկապես զանգվածային լրատվության հետ, ես համարում եմ իմ փորձառության ամենագլխավոր մասը: Հավատացած եմ, որ յուրաքանչյուր երկիր աշխարհում դրան պետք է լուրջ վերաբերվի: Ամերիկայում, արեւմտյան Եւրոպայի եւ շատ այլ երկրներում զանգվածային լրատվության միջոցները մեծ դեր են կատարում տվյալ երկրի քաղաքական գծի մշակման գործում: Այն կարող է որոշիչ դեր չխաղալ, բայց անպայման ազդեցություն է թողնում, եւ թերթերի կողմից մի որեւէ երկրի հասցեին ներկայացված սեւ պատկերը չի կարող նպաստել այդ երկրի հանդեպ մշակվող քաղաքականության դրական լինելուն:

Ներկայիս Հայաստանի համար խիստ կարեւոր է ամեն ջանք ի գործ դնել, որպեսզի իր շրջանի, հատկապես Ղարաբաղի մասին լրատվությունը լինի ճշգրիտ, հավաստի եւ հավասարակշռված: Ես չեմ խոսում պրոպագանդայի մասին: Զանգվածային լրատվության հաջողությունը մեծապես կախված է նրա հաղորդած տեղեկությունների հավաստիությունից, ներկայացված փաստերի ճշգրտությունից: Դուք կարող եք ցանկացած ձեւով մեկնաբանել դրանք, բայց դրանք պետք է ճշգրիտ լինեն եւ հավաստի: Իհարկե, հարգանքով պետք է մոտենալ նաեւ յուրաքանչյուր լրագրողի անհատական մոտեցմանը, անհատական մենաբանությանը: Մենք մեծ տեղ ենք հատկացնում լրատվությանը, եւ վստահ եմ, շատ երկրներ նույն կերպ են վերաբերվում դրան: Վստահ լինելու համար, թե տրամաբանությունը դրական է, դուք պետք է հետեւեք, որ ճիշտ, հավասարակշռված լուրեր հաղորդվեն արտասահման: Սա է գլխավոր միջոցը հասարակական հարաբերությունների: Սուտ լուրերն ու աղաղակողնորոշիչ հաղորդումները վտանգավոր են: Ճիշտ լուրը պետք է ճիշտ ժամանակին, հնարավորին չափ արագ, տեղ հասնի ամբողջական տեսքով: Ես հասկանում եմ, որ սա դժվարություններ հետ է կապված, բայց հույս ունենամ, որ գիտակցելով դրա անմիջական կարեւորությունը, Հայաստանի կառավարությունը մեծ ուշադրություն կդարձնի դրան:

– Պրն. Զորբյան, սա ձեր առաջին այցելությո՞ւնն է Հայաստան:

– Իմ առաջին այցելությունն է Հայաստանի Հանրապետություն: Ես հորս հետ այստեղ եղել եմ 1979-ին: Երբ այդ մասին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին դատմեցի, նա ասաց, որ դա դեռ այն Հայաստանը չէր: «Հիմա եք դուք իսկական Հայաստանում», ասաց նա:

– Ինչպիսի՞ն են ձեր տպավորությունները, հատկապես այս օրերին, երբ շատ արագ են զարգանում դեպքերը:

– Պետք է ասեմ, որ խառը տպավորություններ են: Ես հինգ օր է այստեղ եմ եւ մանրամասն չգիտեմ դեռ երկրի զարգացմանը խանգարող կամ նպաստող խնդիրները: Դրանք տպավորություններ են եւ հետագայում պետք է մանրակրկիտ վերլուծության ենթարկվեն: Այցելությունները պետք է կրկնվեն, որ որոշակի դատկեր կարողանաս գծել: Խառը զգացումներ են դատում ինձ: Քաջալերական եւ ոգեւորող է այն, որ մարդիկ լծվել են երկիրը ոտքի կանգնեցնելու գործին: Մյուս կողմից մտահոգիչ է, ոչ թե բացասական, այլ մտահոգիչ, որ քաղաքական հակասություններ սրվում են: Երկխոսությունը, քաղաքական երկխոսությունը ռամկավարական գործընթացի անբաժանելի մասն է կազմում: Հուսով եմ, որ քաղաքական գործընթացը հսկողությունից դուրս չի գա եւ չի խամրեցնի այն ամենը, ինչ ձեռք է բերված արդեն: Գիտենք, դժվար է կողմնակի անձ լինել եւ գիտակցել, որ չպետք է քո կամքը թելադրես: Պետք է հույս ունենալ, որ ամեն ինչ կհարթվի, որ ազգային միասնությունը կհաղթանակի, որ ազգային ոգին կբարձրանակի վառ մնալ:

Անկասկած, ամենամտահոգիչը Ղարաբաղյան խնդիրն է, որը նսեմացնում է մյուս բոլոր ձեռքբերումները, մի տեսակ խանգարում զարգացման հնարավորություններին: Առաջին հերթին պետք է հասնել այնտեղ դատերազմի դադարեցմանը: Բարդ իրավիճակ է, ցավ ես զգում մարդկային կորուստների նկատմամբ եւ բարկանում քո անզորության վրա, որ խնդիրը լուծում չի գտնում: Բարկանում ես, որ Ղարաբաղի ժողովրդի արդար դահանջները չեն բավարարվում: Սա հուսահատեցնող է, բայց պետք է հույսը չկորցնել, որ այն շուտով իր գոհացուցիչ լուծումը կգտնի: Եւ հայ ժողովուրդը կլծվի իր երկիրը կառուցելու աշխատանքին:

Ես ծագումով հայ եմ եւ լավ գիտեմ մեր հրաշալի ժողովրդին, որ հազարամյակների դատմություն ունի: Եթե լավատես չլինենք, տանուլ կտանք ամեն ինչ: Պետք է շնչեն, հաստատ իմանալ, որ Հայաստանը դուրս է գալու այս ճգնաժամից, հաղթական է դուրս գալու այս փորձությունից, որպեսզի առաջ շարժվի դեպի խաղաղ զարգացման մի ժամանակաշրջան: Սրան պետք է ձգտենք եւ հավատանք: ■

Հայերն ավելի լավ են վերաբերվում Իրանի միջնորդությանը, քան ադրբեջանցիները

Իրանցի արեւելագետ Էնայաթ-օլլահ Ռեզան շրջանի կացության մասին

Նրա մասին առաջին անգամ լսեցի դեռ Հայաստանում, երբ Մովսես Խորենացու «Հայոց դատմության» 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցների թվում կարդացի նաեւ նրա անունը:

Պրոֆեսոր Էնայաթ-օլլահ Ռեզայի ելույթը նվիրված էր «Մովսես Խորենացու աշխատությունների կարեւորությունը Իրանի համար» թեմային: Բայց հարգարժան արեւելագետի հետ հանդիպելու դատեհությունը ստեղծվեց միայն Թեհրանում: Նա նոր էր վերադարձել Հունաստանում կայացած դանթուրքիզմին նվիրված միջազգային գիտաժողովից եւ թվում էր, մեր խոսակցության նյութը պետք է դա լիներ: Սակայն մեր հանդիպման առաջին իսկ վայրկյանից նա զարմացրեց, «սալամ» ասելու փոխարեն ողջունելով ռուսերեն բարեւով: Անակնկալի գալով, հարցրի.

– Դուք ռուսերեն գիտե՞ք:

– Սկսեմ սկզբից, որ ամեն ինչ դարզ լինի ձեզ համար: 1947-1967 թվականներին աշխատել եմ Նախկին Խ. Միությունում, այդ ընթացքում 2 տարի աշխատել եմ Չինաստանում, բայց հիմնականում զբաղվել եմ Արեւելքի դատմությամբ:

– Ազգությամբ իրանցի՞ եք:

– Այո, ծնվել եմ Իրանի Ռեշտ քաղաքում: 71 տարեկան եմ: Եղել եմ Թեհրանի համալսարանի դրոֆեսոր, նաեւ Մեծ իսլամական հանրագիտարանի գիտական կոլեգիայի անդամ, կարող եմ ունեցել այլ գիտական կազմակերպությունների հետ, բայց այժմ այլեւս չեմ աշխատում, թոշակի եմ անցել, թեեւ չեմ կտրվել գիտությունից:

– Ի՞նչը դրդեց ձեզ զբաղվելու Ադրբեջանի դատմությամբ:

– Դեռ այն տարիներին ինձ հայտնի էր Ադրբեջանում տիրող մթնոլորտը: Կային մտայնություններ, թե Նախկին Խ. Միության Ադրբեջանը եւ Իրանի Ադրբեջանը դետք է միանան: Եւ որքան ես խորացա Ադրբեջանում բնակվող ազգերի դատմության մեջ, այնքան համոզվեցի, որ դրանք բոլորն ցեղեր են, եկել են Ալթայի երկրամասից եւ, փաստորեն, սուտ ադրբեջանցիներ են՝ ինքնակոչներ: Իրականում նրանք Անդրկովկասի բնաբնակներ են: Եկա նաեւ այն եզրակացության, որ այդ տարածքի մի մասը Աղվանքը, դեռ Սասանյանների օրոք գտնվել է Հայաստանի տարածքում: Ադրբեջան անունն ի հայտ եկավ 1918 թվականին, երբ երիտթուրքերն այնտեղ ղեկավար նշանակեցին դանթուրքիստներին եւ ստիպեցին, որ այդ անունը կրի ներկա Ադրբեջանի Հանրապետությունը: Թուրքերը մտադրություն ունեին այդ տարածքը միացնել Իրանի Ադրբեջանին: Մարդիկ այն ժամանակ դիմադրեցին, քանի որ դարզ էր նրանց մտադրությունը՝ երկու Ադրբեջանները միացնել Թուրքիային:

1920 թվականին, երբ բոլշեւիկները գրավեցին Բաքուն, չփոխեցին Ադրբեջանի անունը, որն էլ դարձավ մեծ ողբերգություն: Երկու Ադրբեջանների միացման քարոզչությունը մի նոր թափով սկսվեց երկրորդ համաշխարհային դատերազմից հետո: Նույնը շարունակվեց նաեւ ԽՍՀՄ փլուզումից ու ԱՊՀ կազմավորումից հետո: Իսկ այս տարվա մարտին Աբուլֆազ էլչիբեյն անգամ հայտարարեց, թե Իրանում շուտով կըստեղծվեն հինգ տարբեր երկրներ՝ դարսիկների, բալուչների, արաբների, քրդերի եւ ադրբեջանցիների: Վերջիններս էլ իբր կմիավորվեն իրենց եւ կստեղվի 40 միլիոնանոց թեռություն: Չգիտեմ, որտեղից էր նա այդ թվերը վերցրել, եթե 6 միլիոն ադրբեջանցի իրենց մոտ են ադրում, 6 միլիոն մեզ մոտ:

Այս ամենը ցույց է տալիս, որ նրանք այնքան էլ բարյացակամ չեն մեր նկատմամբ: Եւ դա այն դեռքում, երբ մեզ հետ հաստատել են դիվանագիտական հարաբերություններ:

– Ըստ էության, որքանով դարզեմ Հայաստանի նկատմամբ ձեր ունեցած վերաբերմունքը, նախ պետք է ըմբռնեմ, թե ինչպե՞ս են իրանցիները վերաբերվում Արցախյան խնդրին:

– Դա մի փոքր դժվար է ասել, որովհետեւ Իրանն այդ հարցում երկկողմ վերաբերմունք ունի: Մի կողմից գործում է կրոնական գործոնը՝ իրանցիները մուսուլման են եւ չեն կարող տանել, երբ սպանում են այլ մուսուլմանների: Բայց ելնելով արդարության սկզբունքից, իրանցիները Հայաստան-Ադրբեջան կոնֆլիկտին վերաբերվում են ավելի իրատեսորեն: Թեեւ, նորից եմ կրկնում, նրանք մուսուլմաններ են:

– Դուք երեւի արդեն հնարավորություն եք ունեցել խորանալու Ղարաբաղի խնդրի մեջ: Փակուղուց դուրս գալու ի՞նչ ուղիներ եք տեսնում:

– Ճիշտն ասել չեմ կարող, որովհետեւ դա կախված է գոյություն ունեցող դայմաններից: Բայց, իմ կարծիքով, եթե բնակչության մեծամասնությունը՝ մոտ 80 տոկոսից ավելին հայեր են, ապա իսկապես անհասկանալի է, երբ ադրբեջանցիները ձգտում են ղեկավարել նրանց: Ադրբեջանցիները պետք է բողոքեն, որ տեղի հայերն իրենց ճակատագիրն ինքնուրույն տնօրինեն: Մինչդեռ նրանք ինչո՞ր ներկայացուցիչների են ուղարկում Ղարաբաղ՝ տեղացիներին կառավարելու: Դա անհասկանալի է:

– Իսկ ինչպե՞ս եք գնահատում այս հարցում Թուրքիայի դիրքորոշումը:

– Թուրքերը բնականաբար են տրամադրված հայերի նկատմամբ, որովհետեւ ցանկություն ունեն ստեղծել մեծ թուրքական դետություն: Հայաստանը նրանց դեմ է, որովհետեւ իր աշխարհագրական դիրքով անջատում է Թուրքիան եւ Ադրբեջանը: Այդ դատճառով էլ նրանց խանգարում է Հայաստանի գոյությունը: Դեռ ադրիլ ամսին նրանք մի քարտեզ էին հրատարակել, ուր նշված էր, թե 21-րդ դարում ինչպիսին դետք է լինի թուրքական դետությունը: Ըստ այդ քարտեզի, այն դետք է ձգվի Հարավսլավիայից՝ Սերբիայից, Սիրիայով, Իրանով, Իրանի մի մասով մինչեւ Բաքու: Եւ եթե նրանց հաջողվի, կվերցնեն նաեւ ողջ Միջին Ասիան:

– Դա ձեր գնահատականն է, իսկ Իրանում ինչպե՞ս են վերաբերվում թուրքերին:

– Մենք, իհարկե, ցանկանում ենք մեր բոլոր հարեւանների հետ հաստատել բարիդրացիական հարաբերություններ, բայց դա կախված է նաեւ նրանցից, այս դեռքում թուրքերից: Եթե թուրքերը շարունակեն նման կարծիքներ հայտնել, աջակցել դանթուրքիզմի գաղափարին, դա չենք հանդուրժի: Թուրքերն առնվազն դետք է փոխեն իրենց քաղաքականությունը: Կարծում եմ, որ եթե չփոխեն, մեր հարաբերություններն ամուր եւ բարեկամական չեն լինի:

– Որպես շրջանի մասնագետ, ի՞նչ կկանխորոշեիք Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների զարգացման հարցում:

– Եթե Ադրբեջանը հաշվի առնի Ղարաբաղի ժողովրդի ցանկությունը, հնարավորություն տալով ինքնուրույն լուծել իրենց հուզող հարցերը, ապա ինչ-որ լույս կաղկայծի: Բայց նրանք դժվար թե հետեւեն բանականությանը, անցած չորս տարիները ոչ մի հույս չեն ներշնչում:

– Այն, ինչի մասին խոսեցինք, որեւէ տեղ օգտագործո՞ւմ եք կամ ուղարկում: Ձեր դիրքորոշումը հայտնի՞ է Իրանի ղեկավար շրջաններին:

– Երբեմն ելույթներ եմ ունենում լսարաններում, հոդվածներ եմ տպագրում տարբեր ամսագրերում: Թուրքիային եւ Իրանին նվիրված աշխատություններ ունեմ: Բացի դրանից, շարունակում եմ ակտիվորեն մասնակցել տարբեր միջազգային գիտաժողովներին:

– Մեր երկու երկրների միջեւ ընդարկվող կարեւորագույն հարցերից մեկն էլ Ղարաբաղի խնդրում Իրանի միջնորդությունն է:

– Այդ մեռաբելությունը կախված է կոնֆլիկտին մասնակից երկու հակամարտ կողմերից՝ Հայաստանից ու Ադրբեջանից: Իմ կարծիքով, հայերն ավելի լավ են վերաբերվում այդ հարցին, քան ադրբեջանցիները: Ճիշտ է, ադրբեջանցիները խոսում են իսլամի ու այլ բարեկամական կապերի մասին, բայց ավելի շատ ենթարկվում են թուրքական կառավարության ազդեցությանը:

Ինչպես գիտեք, վերջերս Ադրբեջանի նախագահ էլչիբեյն Իրանի դեմ է արտահայտվել եւ Ադրբեջանի հետ կապված որոշ դժվարություններ կան հիմա: Ճիշտ է, այդ ելույթից հետո նրա տեղակալ Սիմոնովը ներողություն է խնդրել Իրանի ղեկավարությունից, բայց դա շատ ծիծաղելի է: Նախագահը բնականաբար տրամադրված կոպիտ արտահայտություններ է անում, իսկ տեղակալը ներողություն է խնդրում: Դա տրամաբանական չէ: Եթե նրանք իսկապես ցանկանում են, որ Իրանը միջնորդի, ապա դարավոր են մեր նկատմամբ չեզոք լինել: Նույնը չեմ կարող ասել Հայաստանի մասին, որտեղից երբեք նման կարծիքներ չեմ լսել:

Թուրքերն Ադրբեջանին հրահրում են անդունդ գլորվել: Նրանք ոչ միայն Հայաստանի, այլեւ Իրանի նկատմամբ են բնականաբար տրամադրում: Սա, իհարկե, իմ անձնական կարծիքն է, որովհետեւ դետական քաղաքականությունն այլ է:

– Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի եւ Իրանի ներկա հարաբերությունները:

– Ճիշտն ասած, դայմանագրի ստորագրումից հետո այն մի հիշ բարդացավ, որովհետեւ Ադրբեջանը հիստերիա բարձրացրեց, թե հայերը հարձակվել են Նախիջեւանի վրա: Իմ ենթադրությունները հետագայում հաստատվեցին՝ դա ընդամենը լավ ծրագրված սադրանք էր եւ կրում էր դրոֆիլակտիկ բնույթ: Մենք Հայաստանին համարում ենք լավ հարեւան եւ ցանկանում ենք ունենալ խաղաղ, բարեկամական կապեր:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Թագավորական ընտանիքն իր ձեռքն է վերցրել լրատվական միջոցները

ՍԱՈՒԴՆԵՐԻ «ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ»

Այսօր, երբ շրջանի, մասնավորապես արաբական աշխարհի մասին վերլուծության համար տեղեկություններ սանում ենք հիմնականում հարեւան երկրների մամուլից, ռադիո եւ հեռուստաալիքներից, անհրաժեշտ է սկզբում պարզություն մտցնել, թե ինչ աղբյուրներից ենք խաղում տեղեկատվությունը: Որքան էլ մեզ մոտ եւ դրսում խոսվի անկախ մամուլի կամ ընդհանրապես անկախ լրատվական ծառայությունների մասին, խոսքը միշտ գնում է հարաբերական անկախության, ավելի ճիշտ՝ կախվածության մասին: Հետեւաբար, տեղեկատվությունը գալիս կամ մատուցվում է ինչ-որ տեղ միակողմանի: Պարտադիր չէ ենթադրել, թե դա արվում է գիտակցաբար:

Դեպքերի ու երեւույթների ճիշտ իրավիճակը պատկերացնելու եւ համապատասխան եզրակացությունների հանգելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այս հանգամանքները: Հոդվածի նյութը վերաբերում է արաբական աշխարհի ամենախոշոր, Սաուդյան Արաբիայի թագավորական գերդաստանի՝ Սաուդների լրատվական կայսրությանը, որը վերահսկում է արաբական լրատվական հոսքի մեծ մասը: Ավելացնենք, որ Սաուդների տնօրինության տակ են գտնվում նույն աշխարհի ամենահայտնի, ամենաազդեցիկ եւ ամենաներկայանալի լրատվական միջոցները: Այս ամենի շնորհիվ հասարակական կարծիք է ստեղծվում, որի կրողները արաբական աշխարհի մի զգալի մասն են կազմում: Այդ կարծիքը ոչ մի կերպ չի կարելի մի կողմ թողնել, մանավանդ որ մեծ մասամբ այն համընկնում է ԱՄՆ-ի տեսակետներին, վերջինիս՝ Սաուդների հետ ունեցած սերտ կապերի պատճառով:

Դեռ ոչ հեռու անցյալում Սաուդները մամուլում նոպասավոր կարծիք էին ստեղծում, ոսկյա ժամացույցներով կամ կանխիկ դրամով լրագրողներին գնելով: Ժամանակները փոխվել են: Այժմ նրանք գնում են այն ամենը, ինչ կապված է լրատվական հոսքի հետ եւ, ի սարսափ շատ-շատերի, ամբողջ արաբական աշխարհի լրատվական միջոցների միավորման ճանապարհին են: Նրանց ազդեցությունը թագավորությունից դուրս ընդգրկում է Միջին Արեւելքում, Ամերիկայում եւ Եւրոպայում ստեղված 14 պարբերական, 2 ռադիոկայան ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում, երկու արբանյակային հիասքանչ հեռուստաալիքներ՝ Կալիֆորնիայից մինչեւ Ծոց հեռարձակման հնարավորությամբ: Սաուդյան թագավորական ընտանիքի երկու անդամներ՝ արքայազներ Սալմանը եւ Խալիդը, ամենատարածված 4 հրատարակչություններ հսկող փաթեթներ ունեն, իսկ Ֆահդ թագավորի փեսա Շեյխ Ուալիդ Ալ-Իբրահիմը Լոնդոնի Միջին Արեւելյան հեռարձակման կենտրոնի (MBC) նախագահն է եւ «ամենաածանր բաժնետերը»: MBC ստեղծվում է արբանյակի միջոցով դեպի Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա եւ Միջին Արեւելք, շուտով կհասնի ԱՄՆ, Ասիա եւ նախկին ԽՍՀՄ իսլամական հանրապետություններ: Այն տալիս է արաբական աշխարհի կարեւորագույն իրադարձությունների հնարավոր ամբողջական պատկերը լինի դա Մադրիդում միջինարեւելյան խաղաղության համաժողով, Դաֆարում իսլամական գագաթաժողով թե Ռամադան ամսում Մեքքա ու Մադինա ուխտագնացություն եւ այլն:

Վարչակարգի հակառակորդները գտնում են, որ Սաուդների լրատվական միջոցների փայլփլուն, ճոխ ներկայացումները լուրջ չեն եւ նոպասակ ունեն փոխարինել լուրջ բեմաների քննարկումներին, ինչպիսին Միջին Արեւելքում ժողովրդավարության բացակայությունն է, կանանց անիրավահավասար վիճակը կամ ԱՄՆ-ի եւ Իսրայելի հանդեպ իսլամ արմատականների ատելությունը: Մի խոսքով, սաուդյան թիկունքով լրատվական միջոցները հսկայական տեղեկատվություն են տալիս, բայց դառնալով դրա միակ աղբյուրը, հասարակությանը զրկում են կարծիքների բազմազանությունից:

Սաուդներն իրենց լրատվական միջոցները կառուցել են ավելի քան տասը տարում, բայց Ծոցի պատերազմն էլ ավելի զգոնեց նրանց ախորժակը: Իրաքի, որպես արաբական մամուլը Ֆինանսավորողի դուրս մղումը ստեղծեց մի բաց, որը Սաուդները մեծ ուրախությամբ եւ հաջողությամբ լցնում են: Նրանք այժմ ունեն նույնիսկ 24 ժամյա արբանյակային աղահովվածությամբ CNN-ի վրա: Սաուդները հրապուրում են երջանի լավագույն լրագրողներին վճարելով տասն անգամ բարձր աշխատավարձ, քան արաբական մյուս գործակալությունները: Իսկ ովքեր հրաժարվում են գործակցել, նրանց առջեւ փակվում են մնացած բոլոր դռները՝ թիկնեա, կարիերա...

Լիբանանի «Ան-Սահիր» («Զարթեա») թերթի խմբագիր Թալալ Սալմանը փաստում է. *«Նրանց նոպատակն արաբական լրագրությունը սաուդյանի հետ համատեղելն է: Մադրիդից մինչեւ Ծոց դժվար է գտնել մտավոր կարողություններ տեր արաբ գրողի կամ լրագրողի, որը չի աշխատում նրանց համար»:*

Սաուդների առաջամարտիկներից է նաեւ ծնունդով լիբանանցի, սաուդյան միլիարդատեր, Ֆահդ թագավորի ընկեր, Լիբանանի աղագա հավանական ղեկավար Ռաֆիկ Հարիրին, որը տարեկան 10 մլն. դոլար է ծախսում *Radio L'Orient* գործակալության վրա: Վերջինս ստեղվում է Փարիզից Եւրոպա, Լիբանան, Սիրիա, Իսրայելի գրաված տարածքներ եւ ԱՄՆ: Հարիրին ունի 4 հրատարակչական գործակալություն, ծրագրում է ունենալ երկու հեռուստատեսային կայան:

Սաուդների հրատարակչական միջոցները հիմնականում գտնվում են Ֆահդ թագավորի եղբայր, Ռիադի քաղաքապետ արքայազն Սալմանի եւ թագավորի եղբորորդի արքայազն Խալիդ իբն Սուլթանի ձեռքերում: Վերջինս Ծոցի պատերազմում մուսուլմանական զորքերի հրամանատարն էր: Սալմանը բաժնեթղթեր չունի Սաուդների Լոնդոնյան *Research & Marketing* ընկերությունում, բայց նրա ուժը լայնորեն ընթերցվող, Լոնդոնում հրատարակվող կիսապաշտոնական *«Աշ-շարկ Ալ-Աուսաթ»* օրաթերթն է եւ *«Ալ-Մաջալա»* շաբաթաթերթը:

Խալիդն իր ձեռքում է պահում 20 տարով վարձված լիբանանյան ամենաընթեռնելի *«Ալ-Հայաթ»* օրաթերթը եւ այս տարվանից սկսել է ճոխ *«Ալ-Ուսաթ»* շաբաթաթերթի հրատարակումը: *«Ալ-Հայաթը»* միաժամանակ տպագրվում է Լոնդոնում, Ֆրանկֆուրտում, Կահիրեում, Բեյրութում, Բահրեյնում, Մարսելում եւ Նյու Յորքում: Թերթի խմբագիրը նշում է, որ իրենք գրեթե անկախ են, բայց լրագրողներն այնքան «վարժված են», որ ցանկացած քննադատություն ուղղված թագավորական գերդաստանին կամ նրան դաշնակից վարչակարգերին, «անընդունելի է»: Սաուդների ածող մոնոպոլիստական ձգտումները հասակ երեվում են MBC-ի հզորության մեծացմամբ: Կայանը պաշտոնապես Ֆինանսավորում է շեյխ Ուալիդը, բայց ասում են, թե իրականում ծրագրի հեղինակը Ֆահդ թագավորն է: Վերջինիս կարծիքով, լրատվական միջոցներն ամենակարեւոր եւ ամենահարմար գործիքներն են իր տեսակետներն ու քաղաքականությունը պաշտպանելու համար: Եւ թագավորն ամեն օր իր մտքերն արտահայտում է իր փեսա Ուալիդի միջոցով: Ինչքան էլ կայանի ղեկավար Արֆան Նիզամեդդինը պնդի, թե իրենք որեւէ քաղաքական գծի հետեւորդ չեն, ակնհայտ է, որ Սաուդների վարչակարգերի քննադատության վրա արգելք է դրված: MBC-ն ծրագրել է այս տարի հասնել ԱՄՆ, որտեղ պիտի համագործակցի սաուդյան մի նոր կայանի *Arab Network of America (ANA)* հետ, որը ղեկավարում է ԱՄՆ-ում դեսպան արքայազն Բանդար-իբն Սուլթանի ընկերը՝ աղա Մոհամեդ Բաղրավին:

Արաբական լրատվական միջոցների կենտրոնացումը Սաուդների ձեռքում աննկատ չի մնում եւ խոր անհանգստություն է առաջացնում: Որոշ թերթերում, առանց իրենց անունները նշելու, լրագրողները գրում են, թե *«այս ամենը սխալ պատկերացում է տալիս հատկապես արաբ մտավորականության մտածելակերպի մասին: Շատերը դեմ են Իրաքի շրջափակմանը եւ միջինարեւելյան խաղաղության համաժողովի նման ընթացքին: Բայց ոչ մեկը համարձակություն չունի բացահայտ ասել իր կարծիքը: Կարո՞ղ է արդյոք լրագրողը ճշմարտություն գրել Ծոցի պատերազմի արդյունքների մասին մի օրաթերթում, որը պատկանում է Նորման Շվարցկոֆֆին»:*

Մի փաստ եւս անհրաժեշտ է առանձնացնել: Չնայած Սաուդների պատկառազդու լրատվական կայսրության ջանքերին, ընդդիմախոսների ղեմքը, հավատը դեպի Սաուդյան ռեժիմը, հիմնականում արաբական աշխարհում, խորը տնտեսական անհամաչափության եւ անհավասարության պատճառով ընկնում է: Ծոցում ադրոր արաբների 8 տոկոսը (մեծ մասը սաուդներ) վերահսկում են արաբների ազգային համախառն արտադրանքի 50 տոկոսից ավելին: Բացի դրանից, նավթարդյունահանող երկրների հսկայական հարստությունը հիմնականում հոսում է դեպի Արեւմուտք, որտեղ էլ շահութաբեր ներդրումներ են կատարվում: Դրա փայլուն վկայությունն են վերջերս սաուդյան արքայազն Ալ-Ուալիդ իբն Թալալի 590 մլն. դոլար ներդրումները «Citicorp»-ում:

Ինչպես լրատվական միջոցներում, այնպես էլ քաղաքականության մեջ թագավորության անսահման հարստությունն ու դաշինքը Վաշինգտոնի հետ կաղապարում են Միջին Արեւելքի դեմքը: Եւ ավելի ու ավելի ածող Սաուդների իշխանությունը մամուլի վրա այսօր ներկայացնում է արաբական աշխարհի հենց այսպիսի տեսքը:

Ի դեղ, հայ-ադրբեջանական հակամարտության լուսաբանման մեջ այս լրատվական կայսրությունը համեմատաբար չեզոք դիրք է բռնել: Հիմնականում հաղորդագրություններն արվում են հենվելով արեւմտյան գործակալությունների տվյալների վրա: Ճիշտ է, տեղ-տեղ պատահում են «ադրբեջանցի մուսուլման եղբայրների» հետ իսլամական համերաշխության կոչեր, բայց ոչ ավելին: Տեղերից, ինչպես նշում են թղթակիցները, իրենք աշխատում են չեզոք տեղեկատվություն տալ, բայց զարմանալիորեն այդ չեզոքությունն արտահայտվում է միայն ադրբեջանական եւ թուրքական լրատվական գործակալությունների նյութերի հաղորդմամբ: Այս երեւույթի մասին արդեն շատ է խոսվել:

ՍԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ըստ օտար մամուլի

Ազգային դրամ, կամ ռուբլու գերիշխանություն

Մինչեւ հոկտեմբերի 1-ը ԱՊՀ երկրները կհասակեցնեն ռուբլու նկատմամբ իրենց դիրքորոշումը: Ռուսաստանի արտաքին տնտեսական կապերի նախարար Պյոտր Ավենը «ԻԴ»-ին տված հարցազրույցում հաստատել է, որ ըստ նախնական պայմանավորվածության, ԱՊՀ երկրները պետք է մինչեւ հոկտեմբերի մեկը ընդունեն «խաղաղական» որոշում կարգված ռուբլու գոտում իրենց մնալու հետ: Ռուբլու գոտուց դուրս գալու դեպքում նրանք պետք է անցնեն ազգային վալյուտայի, հակառակ դեպքում պետք է ընդունեն Ռուսաստանի կենտրոնական բանկի բացառիկ իրավունքը վարկադրամային էմիսիայի հարցում եւ նրա կարգավորող ֆունկցիան տեղական առեւտրական բանկերի նկատմամբ, ասաց նախարարը: Սակայն, նշել է Ավենը, ռուբլու գոտում անդամակցությունը Ռուսաստանից կպահանջի իր գործընկերների հետ հաշվաբանեցնել այդ պատասխանատու որոշումները: Այդ խաղաղականության համար Ռուսաստանի կենտրոնական բանկում նախատեսվում է ստեղծել ղեկավարների խորհուրդ, որի մեջ կմտնեն անկախ պետությունների ներկայացուցիչներ: Պյոտր Ավենը հայտարարել է, որ Ուկրաինան եւ Ադրբեջանը ռուբլու գոտուց դուրս գալու ամենահավանական թեկնածուներն են: Ղազախստանը եւ Ղրղզստանը կմիանան այդ գոտուն: Այսու միջինասիական հանրապետությունները դեռ կմնան ռուբլու գոտում, բայց նրանց երկարաժամկետ անդամակցությունը դեռ պարզ չէ, ասել է նախարարը: ■

Խուճապ Թուրքիայում

Թուրքիան խուճապի մեջ է: Ներքին շուկայում հայտնաբերվել են հսկայական քանակությամբ կեղծ ամերիկյան դոլլարներ: Երկրում օտարերկրյա կեղծ արժույթի երեւան գալը Թուրքիայի համար նորություն չէ, սակայն այս անգամ խոսքը գնում է միլիարդների մասին: «Միլլիյեթ» թերթի հաղորդմամբ, երկրի Ֆինանսական ոստիկանությունը (պարզվում է այդպիսին էլ կա այստեղ), որը հայտնաբերել է մի ամբողջ շարք հարյուր դոլլարանոց թղթադրամներ, ողնդում է, որ եթե լրիվ տրվել է դոլլարների ամեն մի շարք, արդա ընդհանուր գումարը կարող է կազմել մոտ 30 միլիարդ դոլլար: Առաջ են քաշվում տարբեր վարկածներ: Ենթադրություն կա, թե այս գործին մասնակից է պետությունը, որը ձգտում է խախտել Մերձավոր Արեւելքում տնտեսական հավասարակշռությունը: Որոշ մասնագետներ պնդում են, թե կեղծ դրամի տպագրությունը կազմակերպել է ԿՀՎՆ, նպատակ ունենալով հարվածել Իրաքին, որպեսզի արդիավվի Սադդամ Հուսեյնի անկումը: Կան նաեւ այլ վարկածներ. «կեղծ դոլլարների» խաղն ուղղված է Ռուսաստանի թուլացած տնտեսության քայքայմանը: Հարյուր դոլլարանոցներն այնքան լավ են պատրաստված, որ աննշան տարբերությունները դժվարությամբ է որոշում նույնիսկ դրամատնային հսկիչ սարքը: Կեղծ դրամների տարբերությունն իսկականներից կայանում է նրանում, որ կեղծվածների թուղթը սովորականից մի քիչ հաստ է, իսկ նախագահ Ֆրանկլինի դեմքի վրայի մազերը եւ կնճռները հստակ չեն երեւում: ■

«Պանասիա» նոր կառուցվածք

«Հնդկաստանը, Չինաստանը եւ Ճապոնիան կարող են լինել նոր համասիական կառուցվածքի ստեղծման նախաձեռնողները, որը կարող է ծանրակշիռ դեր խաղալ միջազգային բեմում «սառը պատերազմի» ավարտից հետո», ճապոնական *«Իոմիուրի»* թերթին տրված հարցազրույցում հայտարարեց Հնդկաստանի վարչապետ Նարասիմա Ռաոն: Բնական է, որ Ասիայի երկրները նույնպես պետք է ձեռնամուխ լինեն շրջանում քաղաքական եւ տնտեսական նոր կարգի ձեւավորմանը: Հսկայական բնակչություն ունեցող այնպիսի պետություններ, ինչպես Հնդկաստանը եւ Չինաստանը, ինչպես նաեւ գերզարգացած եւ տեխնիկապես հագեցված Ճապոնիան կազմում են մի լավ խառնահանք բոլորովին ինքնուրույն, անկախ կառուցվածքի ստեղծման համար, որը կոչված կլինի համաշխարհային գործերում ավելի մեծ դեր խաղալու: ■

Թուրքիան դեմ հանդիման տիած անակնկալների

Հյուսիսային Իրաքում կազմավորվեց քրդական կառավարություն

Ընտրությունները Հյուսիսային Իրաքում ավարտվեցին նրանով, որ կազմավորվեց 105 տեղից բաղկացած քրդական ինքնավարության խորհրդարանը: Թուրքիան, որ մեծ մտահոգությամբ է հետեւում իրադարձությունների զարգացմանը այդ տարածքում, դեմ առավ իր համար բավականին տիպ մի քանի անակնկալների: Առաջինը թուրք-իրաքյան սահմանի անցակետում հայտնված *«Բարի գալուս Քրդստան»* ցուցատախտակն էր: Ընդ որում, այդ բառերը ցուցատախտակի վրա անգլերենից, արաբերենից եւ պարսկերենից բացի գրված էին նաեւ թուրքերեն: Երկրորդը, տիկին Դանիել Միտերանի քրդական խորհրդարանը շնորհավորելու նպատակով Հյուսիսային Իրաք կատարած այցն էր: Նշենք, որ տիկին Միտերանը Հյուսիսային Իրաք էր մեկնել Դիարբեքրի, այսինքն Թուրքիայի վրայով: Երրորդը Իրաքի հետ Թուրքիայի սահմանամերձ շրջաններում տեղակայված ամերիկյան հատուկ զորամասերի առկայությունն էր: Այդ զորամասերի առկայությունը Վաշինգտոնի կողմից բեւ բացատրվում էր Հյուսիսային Իրաքի քուրդ ազգաբնակչությանն ու Թուրքիայի սահմանները Սադդամի ոտնձգություններից պաշտպանելու անհրաժեշտությամբ, սակայն հիմա արդեն հայտնի է դարձել, որ դրանք ունեն նաեւ քրդական ինքնավարությունը թուրքական զինված ուժերի ոտնձգություններից պաշտպանելու պարտականություն եւս: Քրդական ինքնավարության կազմավորումը Թուրքիայի անմիջական հարեւանությամբ եւ ԱՄՆ-ի հովանավորությունն այդ ինքնավարությանը ինչքան էլ տիպ լինի Անկարայի համար, այնուամենայնիվ Անկարան ստիպված է բավարարվել սոսկ դժգոհություն արտահայտելով, քանի որ համաքուրքական զոտու ստեղծումն ու Սեւծովյան երկրների տնտեսական համագործակցության նախաձեռնության հաջողությունը կապված են նրանից, թե ԱՄՆ-ը ինչքանով կվարկավորի: Չնայած Վաշինգտոնի, այդ թվում նաեւ Իրաքի քրդական ճակատի ղեկավարության հավաստիացումներին, թե բացառվում է Քրդական անկախ պետության ստեղծումը, այնուամենայնիվ ինքնավարության կազմավորումը Հյուսիսային Իրաքում անկախ պետականության ուղղությամբ արված չափազանց լուրջ քայլ է: Այդ առումով բոլորովին պատահական չէ Թուրքիայի մտահոգությունը: Համենայն դեպս, բոլորովին վերջերս ձեւավորված քրդական կաբինետը բաղկացած է, ներառյալ վարչապետը, 17 նախարարություններից: Կառավարության մեջ վարչապետի պաշտոնը զբաղեցնում է Քրդիստանի հայրենասերների միության անդամ դոկտոր Ֆուադ Մասումը: Կաբինետում 8 նախարարություն բաժին է հասել Քրդիստանի դեմոկրատական կուսակցությանը (ի դեղ, վարչապետի տեղակալ դոկտոր Ռոբ Նուրին այդ կուսակցությունից է), 8 տեղ հատկացվել է Քրդիստանի հայրենասերների միությանը, իսկ մեկ նախարարություն տացել են Հյուսիսային Իրաքի ազգային փոքրամասնություններից ատորիները: Թուրքմեններին կաբինետում ոչ մի տեղ չի հատկացվել:

Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության խորհրդարանում կայացած երդման արարողությունից հետո «Հյուրրիյեթ»-ի թղթակիցը հարցազրույց է ունեցել վարչապետ Ֆուադ Մասումի հետ: Վերջինս պատասխանելով թղթակցի հարցերին, բարձր է գնահատել տիկին Միտերանի այցը Հյուսիսային Իրաք, այնուհետեւ ասել. *«Մենք չենք ընդունում Սադդամի կողմից մեզ առաջարկված ինքնավարությունը: Ինքնավարության վերաբերյալ մեր եւ Սադդամի միջեւ կայացած փոխհամաձայնությունը չի կարելի ուժի մեջ համարել, քանի որ մուրդ ժողովուրդն ունի իր խորհրդարանն ու կառավարությունը»:* Այն հարցին, թե քրդական կառավարության կազմավորումը կարելի է համարել անկախ պետականության ուղղությամբ արված կարեւորագույն քայլ, Մասումը պատասխանել է. *«Առայժմ դժվար է կողմնորոշվել: Սակայն հայտնի է, որ մենք ինքնավարության եւ անկախության միջեւ ենք գտնվում: Ժամանակը ցույց կտա, թե ինչ ուղղություն կվերցնենք»:*

ՀԱԿՈԲ ՉԱՔԻՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Նիկոլայ II ցար 1914 թ.

Ռուսական վերջին կայսրի աճյունը գտնվել է

Դեռևս 13 տարի առաջ երկու հոգի հայտնի էր տեղը

Վերջերս Եկատերինբուրգի (նախկին Սվերդլովսկի) դատական փորձագիտական գրասենյակում կատարված լուսանկարահանումներն իրոք թանկ արժեն: Եւ ոչ միայն նյութապես, չնայած այդ նկարահանումների համար գլուխ էին ջարդում աշխարհի խոշոր գործակալությունները: Խոսքը գնում է 1979-ին «Զեոֆբերում» հիմնադրամի նախագահ Ալեքսանդր Ավդոնինի կողմից Կոդոյուգի գյուղի մոտ հայտնաբերված ցարական ընտանիքի աճյունների նկարահանման թույլտվության մասին: Ռուսատանյան եւ արտասահմանյան գործակալություններից առաջինը դա թույլատրվեց «Իզվեստիա» թերթին:

Ռուսական կայսր Նիկոլայ 2-ի եւ նրա ընտանիքի անդամների աճյունների ոսկորները բավականին խճճված էին: 1918 թ. Կոլչակի բանակի առանձնահատուկ գործերով զբաղվող քննիչ Սոկոլովը, որն առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ կայսերական ընտանիքի սպանության հետաքննությանը, բառացիորեն անցավ այն տեղանքով, որտեղ նետված են եղել գնդակահարվածների մարմինները: Նա նույնիսկ լուսանկարեց այն, նկարը զետեղելով իր գրքում: Ավդոնինի կարծիքով, Սոկոլովը ուղղակի ժամանակ չունեցավ եւ չէր էր կարող ենթադրել, որ մարմինները կարող էին թաքցվել այդոլիսի դաժանությամբ՝ ուղղակի ճանապարհի վրա, գերանաբարից առաջացած փոսի մեջ: Ալեքսանդր Ավդոնինն այն ժամանակ երիտասարդ երկրաֆիզիկոս էր. հաջաեղյակ լինելով թագավորական ընտանիքի սպանության դատմությանը, 70-ական թվականների սկզբին որոշեց իր դատախազական հմտությամբ սկսել աճյունների որոնումը: Համեմատելով մեծ հանգամանքով փաստեր, նա եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է որոնել հենց այդ տախտակամածը, որը նկարագրել էր Սոկոլովը: Իր բարեկամի՝ նույնպես երկրաֆիզիկոսի հետ միասին նրանք թույլտվություն ստացան իբր երկրաֆիզիկական աշխատանքների նպատակով գործել հենց նշված գյուղի շրջանում եւ երեք տարվա ընթացքում գնում էին նշված ճանապարհով, ձգտելով գտնել այն տախտակամածը, որ երկար տարիների ընթացքում բնականաբար խորացել էր ճահճի մեջ:

Ավդոնինին անգնահատելի գիտական եւ գործնական օգնություն մատուցեց գրող եւ այն ժամանակվա ներքին գործերի նախարար Շչոլոկովի խորհրդատու Գելի Ռյաբովը եւ մի քանի այլ մարդիկ:

«Անկեղծ ասած, որոնում էինք այն զգացումով, որ թագավորին ցանկալի է գտնել այն, ինչ որոնում ենք, պատմում է Ավդոնինը: *Ուղղակի ցանկանում էինք ստուգել մեր վարկածները, որոնք շատ էին: Մի վարկածով՝ թագավորին գնդակահարել էին, իսկ ընտանիքը տարել ինչ-որ տեղ: Դա խորհրդային կառավարության վարկածն էր: Մեկ ուրիշով՝ աճյունները այրել էին եւ ցաքուցրիվ արել: Ըստ երրորդի՝ ընտանիքը գնդակահարել էին, իսկ գլուխները կտրել, որպեսզի հետքերը կորցնեն: Մենք որոնում էինք եւ հասկանում, որ եթե հանկարծ գտնենք, ապա կառաջանար գտնվածի հետագա ճակատագրի խնդիրը եւ մեր սեփականն էլ՝ այդ թվում: Այն տարիներին նման հետաքննությունն ուղղակի վտանգավոր էր: Առավել ես պատրաստվում էր Իպատեյան տան ավերումը, որտեղ կատարվեց սպանությունը, եւ իշխանությունները ոչնչացնում էին իրենց նախորդների կողմից կատարված սպանությանը վերաբերող բոլոր առարկաները»:*

1979 թվականին Ավդոնինն իր վեց բարեկամների հետ սկսեց ճանապարհի խորքում, հայտնաբերված փայտե տախտակամածի պեղումը: Երբ բարձրացրին գերանները, սոսկալի գարշահոտություն տարածվեց՝ տասնյակ տարիներ կուտակված գազերը դուրս եկան: Շուտով երեւաց առաջին գանգը...

«Նրա ներսում տեսանք վարդագույն ուղեղը, պատմում է Ավդոնինը: *Թե ինչպես էր այն պահպանվել՝ չհասկացանք: Գանգը վերցրինք, որպեսզի փորձաքննություն կատարենք: Մնացած ամեն ինչը՝ գտնված գնդակները, անոթների բեկորները, որոնցում բոլշեւիկները տանում էին դիակների վրա լցնելու համար աղաթթուն, թաղեցինք հենց այդտեղ: Երեկոյան հոգեհանգիստ կատարեցինք, վերջին կայսրի հոգու հանգստության համար օրի խմեցինք...»*

Փորձաքննությունից, բնական է, ոչինչ չստացվեց: Ճշմարտությունն ասելու յուրաքանչյուր փորձ կարող էր տխուր վերջանալ:

10 տարի շարունակ թաղման վայրը մնաց Ավդոնինի հսկողության տակ: Հատուկ օրագիր էր վարում, որում գրանցվում էր ճանապարհի շուրջը կատարվող ամեն ինչ:

1989 թվականին, երբ Գելի Ռյաբովը, խախտելով գաղտնիքը չհրապարակելու մասին պայմանագիրը, *«Մոսկովսկիե նովոստի»* թերթում հրապարակեց գանգի լուսանկարը եւ աճյունների մասին իր հոդվածը, Ավդոնինը որոշեց դիմել ռուսատանյան եւ համաշխարհային հասարակությանը խնդրանքով, որ ստեղծեն փորձագետների անկախ հանձնաժողով, որը եւ կորոշեր գտնվածի վերջնական ճակատագիրը: Սակայն թերթերում հայտնվեց գորբաչովյան *«գերեզմանափորներ»* արտահայտությունը, ժողովրդին նորից կոչեցին դեղի *«իրականություն եւ կբռնատվածություն»*: Լույս աշխարհ եկան Կատինի լեհական թաղումների, ցվեղական դիվանագետ Վալենբերգի զոհվելու, մի ամբողջ ժողովրդի դեմ ցեղասպանության մասին ահավոր փաստեր: Հասարակության գիտակցությունը այնպես ցնցեցին, որ «ցարի գործը» մոռացության մատնվեց:

Եւ միայն 1991 թվականին Ա. Ավդոնինը դիմեց Սվերդլովսկի մարզի վարչության ղեկավար Է. Ռուսելին: Նա գտածի մասին տեղեկացրեց Բորիս Ելցինին: Շուտով ենթադրվող ցարական ընտանիքի ինը կմախքները հանվեցին հողից, իսկ նրանց լուսանկարները հրապարակվեցին: ■

Ուսադիրներով համասեռամոլները

Մեծ Բրիտանիայի դաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ այսուհետեւ զինված ուժերում համասեռամոլությունը դադարում է քրեականորեն պատժվող իրավախախտում լինելուց: Մինչ այդ համասեռամոլ զինծառայողները անխնա հալածվում էին: Յուրաքանչյուր տարի միջինը 10 հոգի մեկուկես տարով բանտ էր նետվում:

Միասեռամոլ մարտիկների նկատմամբ ներողամտությանը բրիտանական հասարակությունը վաղուց էր սպասում: Սակայն բավարարվածության զգացմանը խառնվեց դառնության մասնիկ՝ ռազմական նոր օրենսդրությունը այնուամենայնիվ նախատեսում է, որ զինծառայողներն անմիջապես կազատվեն բանակից, եթե հաստատվի նրանց համասեռամոլական կողմնորոշումը:

Զինվորականները շարունակում են ենթադրել: Այսպես օրինակ, բրիտանական համասեռամոլության ջատագովներից մեկը՝ Պիտեր Թեթչելը բանակում մտցված նորույթը գնահատում է որպես կիսամիջոց, որը փաստորեն ոչինչ չի փոխում համասեռամոլ հայրենակիցների նկատմամբ կառավարության խստական քաղաքականության մեջ: Իսկ ազատական-ժողովրդավարական կուսակցության նախագահ Պեդի Էշդաունը, որը հետեւողականորեն հանդես է գալիս բոլորի հավասար իրավունքների համար, հայտարարեց. *«Մեր որոշ անկանի զորահրամանատարներ համասեռամոլ են եղել: Եւ դա բոլորովին էլ նրանց չի խանգարել ծառայել հայրենիքին»:*

«Բանակը եւ հոմոսեքսը» թեմայով բանավեճերը տարվում են նաեւ ԱՄՆ-ում: Այնտեղ կարգերը նույնպես բավականին խիստ են. յուրաքանչյուր տարի համասեռամոլության պատճառով զինված ուժերից ազատվում է մոտ 1500 մարդ: Բանակային վերնախավը համառորեն խոչընդոտում է կանոնադրության մեղմացմանը:

Այլ երկրներում բանակը եւ համասեռամոլությունը խաղաղ գոյակցում են: Օրինակ, Ֆրանսիայի, Նիդեռլանդների եւ Ավստրիայի զորանոցներում հաճախ կարելի է հանդիպել համասեռամոլի, որը չի թաքցնում իր համոզմունքները, որովհետեւ այդ երկրների բանակում համասեռամոլությունը պատշաճորեն թույլատրվում է: Որոշակիորեն դակաս շահավետ դայմաններում են գտնվում գերմանացիները՝ այդ երկրում բանակային համասեռամոլականների առաջընթացը ծառայողական աստիճանում սահմանափակված է սերժանտային եւ դրաստորչիկային կազմով:

«Գարդիան», Լոնդոն

ՇԱԽՄԱՏ

14-ամյա Էլինան աշխարհի չեմպիոն

Գերմանիայի Դուսբուրգ քաղաքում հունիսի 29-ից հուլիսի 14-ը տեղի ունեցած աղջիկների շախմատի աշխարհի առաջնությունը փառավոր էջ ավելացրեց Հայաստանի մարզական կյանքում: Այնտեղ իր հասակակիցների մեջ չեմպիոնուհու կոչումը նվաճեց երեւանի թիվ 176 դպրոցի աշակերտուհի, 14-ամյա Էլինա Դանիելյանը:

ՀԱՅԿԱՀԵՂԱԹՈՒԽԱԿԱՆ ԽՈՀԵՐ

Մտերի զորահավաքին ներկայացան...

◆ Մեր կառավարության միջազգային հեղինակությունը բարձրացավ՝ ներքինը մնաց նույնը: Օդի ջերմաստիճանը բարձրացավ՝ աղտոտվածությունը մնաց նույնը: Գները բարձրացան՝ որակը մնաց նույնը: Թատերային հրապարակում մեր տրամադրությունը բարձրացավ՝ գոնե դրամադրությունը մնար նույնը: Հարց բարձրացավ, թե՝ սրա վերջն ի՞նչ պիտի լինի: Պատասխանը մնաց նույնը՝ վերջը լավ կլինի:

◆ Մի ժամանակ հասարակական զուգարաններում հայտնվում էին մեն-մի գաղափարախոսություն արտահայտող թերթեր: Հիմա սպասարկումը դարձել է բազմատեսակ:

◆ Եթե ճշմարտությունն ունենար երկրային ծագում, ամենայն հեշտությամբ պիտի լուծվեին երկրային հարցերը:

◆ Մարդու խելքն ուշում են նաեւ, երբ սամոխոն է դառնում նրա ուղեղի թաղանթը:

◆ Մարդկանց մեծամասնությունը ձգտում է փրկել իր նյութականը: Զգալի մասը՝ եւ նյութականը, եւ հոգեկանը: Սակավաթիվ են նրանք, ովքեր ջանում են փրկել հատկապես հոգեկանը:

◆ *Գանգստերություն ժամանակակից ձեւով.*- Մտնում ես խնայդրամարկղ, հանում ես ատրճանակը եւ բացականչում. «Տվեք ինձ ըստ իմ գրքույկի հատանելիք գումարը»:

◆ *Սոցիալ-քվաբանական խնդիր.*- Եթե տաքսի նստելու նախավճարը հինգ ռուբլի է, ապա ի՞նչ արժե դռնակը բացել-փակելը կամ վարորդին հարցնելը, թե ուր կբարեհաճի ուղեւորվել:

Զինկոմի տեղակալ՝
ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Արվեստ. Ծագող հույսեր

Դաշնակահարուհի Անի Մարտիրոսյանը հեղինակություն է նվաճում Իտալիայում

Դաշնակահարուհի Անի Մարտիրոսյան

Իտալիայի Միլան քաղաքից խմբագրություն զանգահարեց դոկտոր Պիետրո Քուչուկյանը, հայտնելով, թե *«հայաստանցի երիտասարդ դաշնակահարուհի օրիորդ Անի Մարտիրոսյանը իտալական երաժշտական շրջանակներում օրեցօր ավելի հայտնի է դառնում եւ համակրանք շահում իր արվեստի հանդեպ»:*

Անի Մարտիրոսյանը ծնվել է Երեւանում, 1967 թ. հունվարի 1-ին: 5 տարեկան հասակից սկսել է դաշնամուրի դասընթացներին հաճախել, իսկ 6 տարեկանից ընդունվել է Չայկովսկու անվան երաժշտական դպրոց դրոնֆ. Վիլլի Սարգսյանի դասարանը, որը փայլուն ավարտել է 1985 թ.: Այնուհետեւ Անին ուսումը շարունակել է Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, այն ավարտել է 1990 թ., միաժամանակ հետեւելով իտալերենի դասընթացներին:

1988 թ. երկրաշարժի օրերին Հայաստան եկած իտալացիների մոտ աշխատել է որպես թարգմանիչ: 1989 թ. Պադուա համալսարանի կողմից մի դասվիրակության կազմում հրավիրվել է Իտալիա իտալացի եւ հայ ուսանողների միջեւ կապերը սերտացնելու նպատակով: 1990 թ. Բերգամոյի համալսարանը նրան հրավիրում է հետեւելու իտալերենի մեկամսյա արագացված դասընթացներին:

1991 թ. Հոլանդիայում եւ Իտալիայում որպես դաշնակահար ընկերակցում է թավջութակահար Ավետիս Գյոքչյանին եւ երգչուհի Գայանե Գրիգորյանին: Իտալիայում նրան լսելով, տեղի մասնագետներն առաջարկում են մասնակցել Միլանի կոնսերվատորիայում նշանավոր դաշնակահար Էլի Պերոտայի դաշնամուրային կատարելագործման 6-ամսյա հատուկ դասընթացներին: Անին առանց ժամանակ կորցնելու մեկնում է Միլան, ուր նրան նյութապես ու բարոյապես աջակցում են իտալացի բժիշկ Մարիո Կոսսուն, որ երկրաշարժի օրերին եղել է Հայաստանում եւ այնուհետեւ իր վաղամեռիկ տղայի անունով հատուկ մրցանակ սահմանել հայ բանաստեղծների համար, եւ Միլանի հայկական մշակութային միությունը Ստեփանո Սերափյանի գլխավորությամբ: Անիին օգնել է նաեւ Բերգամո քաղաքից Ջուզեպպե Պարիս ընտանիքը, ամիսներ շարունակ հյուրընկալելով նրան:

Հաջողությամբ ավարտելով դասընթացները, Անին մի քանի համերգներ է տալիս Իտալիայում: Հունիսի 26-ին Տերիատե քաղաքում «Ալբին» կոչվող զինվորական կազմակերպության օժանդակությամբ բարեգործական համերգ է տալիս, որի եկամուտը հենց այդ զինվորներն են բերելու սեպտեմբեր ամսին Հայաստան, Մոլիտակի 18 որբ երեխաների համար:

Մայիսի 24-ին Ռոսսինիի ծննդյան 200-ամյակի առիթով կազմակերպված համերգի ընթացքում Անի Մարտիրոսյանը հատուկ հրավիրվել է Տորրե Բոլդոնե քաղաքի Գամմա թատրոնում Բրամս, Կոմիտաս, Դեբյուսի եւ Շոպեն նվագելու: Իտալական թերթերը, ինչպես հաստատում էր դոկտոր Պիետրո Քուչուկյանը, բավականին լայն տեղ են տվել խոստումնալից հայուհուն: *«Լ'Էկո դի Բերգամո»* թերթն իր այս տարվա մարտի 18-ի համարում Պաոլա Ռիսսիի ստորագրությամբ գրում է. *«Երիտասարդ Անի Մարտիրոսյանն իր նվագով ցույց տվեց՝ զարմանալի տեխնիկական ճկունություն եւ ծրագիրը կատարեց վստահությամբ: Մարտիրոսյանի շնորհիվ հաճույք ունեցանք մեկ անգամ եւս ունկնդրելու հայ կոմպոզիտորներ Կոմիտասի եւ Բաբաջանյանի սիրուն երաժշտական գործերը: Հայ դաշնակահարուհու մոտեցումն այնքան նուրբ էր, որ մեզ կարողացավ ընկղմել չափազանց արտահայտիչ եւ խոր երաժշտական մթնոլորտի մեջ»:* Նրա ուսուցիչը՝ Միլանի Ջուզեպպե Վերդի կոնսերվատորիայի դասախոս Էլի Պերոսսան *«Լա Ստամպա»* թերթում գրում է. *«Հայաստանից ունեցել եմ մի հիանալի ուսանողուհի, որի անունն է Անի Մարտիրոսյան: Գերազանց ավարտելով դասընթացները, նա աղացուցեց, որ ինքն ունի հոյակապ ձեռներ եւ լավ կազմակերպվածություն: Անին շատ երաժշտական է»:*

«Բերգամո օջջի» թերթը նույնպես շատ լավ է արտահայտվել դաշնակահարուհու մասին:

Երիտասարդ արվեստագետին մաղթում ենք նոր հաջողություններ:

ՌԱՖՖԻ ՀԵՐՄՈՆ ԱՐԱՔՍ

digitised by A.R.A.R.@

Մ. Ռաֆաելլի. Հռոմի հանդիպումը մտել է փակուղի

Լեռնային Ղարաբաղի հարցով Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մարիո Ռաֆաելլին կարծիք հայտնեց, թե ԵԱՀԽ-ի շրջանակներում Հռոմի հանդիպումը փակուղի է մտել և անհրաժեշտ է որևէ կարելի է շուտ անցկացնել Մինսկի խորհրդաժողովը: Այդ մասին հուլիսի 16-ին լրագրողներին հայտնեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանը: Նա ընդգծեց, թե Հայաստանը Ղարաբաղյան խնդրի կարգավորումը չի կապում միայն ԵԱՀԽ-ի հետ: *«Մենք միշտ այլընտրանքային տարբերակներ ենք մշակում,* ասաց Շուգարյանը: *Արդեն բարձրացվել է ԱՊՀ-ի խաղաղարար ուժեր ստեղծելու հարցը»:*

Պատասխանելով Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հնարավոր հաստատման մասին «Սնարք»-ի թղթակցի հարցին, մամուլի քարտուղարը նշեց, թե *«Հայաստանն այդ ուղղությամբ քայլեր է անում: Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավումը կնպաստի կայունությանը շրջանում»:*

Մյուս կողմից, ինչպես հաղորդում է «Սնարք», Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովը Հելսինկիից վերադառնալով հայտարարել է, որ *«եթե Հռոմի հանդիպումը չվերացնի Հայաստանի ագրեսիայի հետևանքները, այսինքն՝ հայկական ուժերը դուրս չգան Շուշիից և Լաչինից, Ադրբեջանի մասնակցությունը Մինսկի խորհրդաժողովին կորցնում է իմաստը»:* Թ. Ղասիմովն ասել է նաև, թե *«Մինսկի խորհրդաժողովը պետք է զբաղվի ոչ թե հայ-ադրբեջանական կոնֆլիկտի լուծմամբ, այլ Ղարաբաղյան խնդրի կարգավորմամբ»:*

Ռուբեն Շուգարյանը Մինսկից հրաժարվելու Ադրբեջանի ղեկավարության հայտարարությունը որակեց որպես *«տակտիկական քայլ»:*

Իր հերթին, Թոֆիկ Ղասիմովը հուլիսի 16-ին Բաքվում կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց, թե *«Ղարաբաղյան խնդրի կարգավորման համար Ադրբեջանը մտադիր չէ դիմել այլ պետությունների: Եթե նույնիսկ անհրաժեշտություն զգացվի զինված ուժեր հրավիրելու, դա կլինի միայն ԵԱՀԽ-ի շրջանակներում»* ■

Կանխվեց 30 միլիոն ռուբլու հազվագյուտ իրերի դուրս հանումը

Ինչպես հայտնեցին Հայաստանի ազգային անվտանգության գլխավոր վարչությունից, հուլիսի 11-ին կազմակերպված հանցագործության բաժնի աշխատակիցները մաքսատան աշխատողների հետ համատեղ կանգնեցրել են հանրապետությունից թանկարժեք քեռ դուրս տանող մի խումբ, որի մեջ կան նաև արտասահմանցիներ:

Քեռի մեջ կային 17 հին ձեռագործ գորգեր, 17 արքայական գրեր, 12 աղամանդ, 190 գրամ պլատին, 520 գրամ ոսկի, 4 ոսկեղրամ, 1200 գրամ ալմաստի հումք: Ընդհանուր արժեքն անցնում է 30 միլիոն ռուբլուց: Մասնագետների կարծիքով, որոշ առարկաներ ներկայացնում են պատմական և բանգարանային մեծ արժեք: Այդ առթիվ քրեական գործ է հարուցվել: ■

Հայերը պետք է զգույշ լինեն

Հայաստանի ազգային անվտանգության գլխավոր վարչությունը հանդես է եկել հայտարարությամբ, որում հանրապետության քաղաքացիներին կոչ է անում զգույշ լինել հանրապետությունից դուրս երթևեկելիս: Պատճառն այն է, որ վերջերս հաճախացել են ադրբեջանցիների կողմից հայազգի ուղեւորների առևանգումները, որոնց տանում են Ղազախ եւ փոխարենը պահանջում դրամ կամ ադրբեջանցի գերիների: ■

Կոզիրեւին եւ Շելով-Կովեդյաեւին սփոփում են հրաժարական տալ

Ռուսաստանի ղեկավարության իրազեկ աղբյուրների տվյալներով, իր վերջին նիստում Անվտանգության խորհուրդն անվստահություն է հայտնել արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւին եւ նրա առաջին տեղակալ Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւին նախագահին խորհուրդ տալով ազատել նրանց զբաղեցրած պաշտոններից:

Ըստ որոշ տեղեկությունների, Շելով-Կովեդյաեւն արդեն մեկ շաբաթ է, ինչ թողել է պաշտոնը: Հիշեցնենք, որ Շելով-Կովեդյաեւը Ռուսաստանի խորհրդարանի ներկայացուցիչն է Հայաստանի Գերագույն խորհրդում: Կոզիրեւի հնարավոր հրաժարականի հարցը նախկինում նույնպես բազմիցս բարձրացվել է խորհրդարանում ու նախագահի շրջապատում, բայց մինչ այժմ դրան խոչընդոտել է պետքարտուղար Գենադի Բուրբուլիսը:

Հիշեցնենք նաև, որ Ալեքսանդր Ռուցկոյը նույնպես պահանջել է Կոզիրեւի հրաժարականը: Ելույթ ունենալով հինգշաբթի օրը «Քաղաքացիական միություն» բլոկի խորհրդի նիստում, նա ուշադրություն է դարձրել այն բանին, որ վերջերս հաճախացել են պետական հեղաշրջման շշուկները: Դրա մասին խոսում է նույնիսկ Ռուսաստանի արտգործնախարարը, ասել է Ռուցկոյը: *«Ես գտնում եմ, որ այդպիսիները չպետք է մնան իրենց պաշտոնում, քանզի դրանք կամ հիմարներ են, կամ սադրիչներ»,* ընդգծել է նա: ■

Հայաստանն ու Վրաստանը ոչ մի տարածայնություն չունեն

Երեկ Երեւանում հայտարարեց Վրաստանի արտգործնախարար Ալեքսանդր Չիքվաիձեն

➡ Սկիզբը 1-ին էջում

Արտգործնախարարը օրվա ընթացքում հանդիպեց հանրապետության փոխնախագահ, վարչապետ Գագիկ Հարությունյանին, բանակցություններ վարեց արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ, օրվա վերջում պրն. Չիքվաիձեին ընդունեց հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Այցի կարեւորագույն պահը դարձավ երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագրի ստորագրումը: Կնքվեց նաեւ Հայաստանի ու Վրաստանի արտգործնախարարությունների միջեւ պայմանագիրը:

Պատասխանելով թղթակիցների հարցերին, պարոնայք Հովհաննիսյանն ու Չիքվաիձեն պատասխանեցին լրագրողների հարցերին:

Արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանն ասաց, թե Հայաստանն ու Վրաստանն առաջին պետություններն էին, որ ճանաչեցին միմյանց անկախությունը եւ այժմ ժառանգած ծանր աշխարհաքաղաքական իրավիճակից պետք է միասին դուրս գան:

Շրջանում դաշնակիցների յուրաքանչյուր որ է գնում: Հայաստանն ու Վրաստանը, ի տարբերություն Ադրբեջանի, դեռեւս որոնում են հավասարիմ դաշնակիցների, ուստի հնարավո՞ր է արդյոք Հայաստան-Վրաստան դաշինք, ասենք, կոնֆեդերացիայի ձեւով, որն Չիքվաիձեն մեր այդ հարցին պատասխանեց. *«Առայժմ վաղ է խոսել նման դաշինքի մասին: Մեծությամբ 10 երկրներ ցանկանում են որոշակի տնտեսական եւ քաղաքական դաշինք ստեղծել: Երեւի թե մեզ պետք է շրջանային միավորում եւ այդ իմաստով չեմ բացառում, որ առաջում կլինի Անդրկովկասյան հանրապետությունների դաշինք: Եթե մենք լուծենք մեր առջեւ ծառացած բոլոր սուր խնդիրները, առա որպես Անդրկովկասի հանրապետություններ կարող ենք դաշինքի պես մի բան ստեղծել, դրա մեջ ներառելով նաեւ այլ պետությունների: Այսօր կամ վա՞ղը, առայժմ ինձ համար դա չի ուրվագծվում: Դաշինք ստեղծվում է այն պահին, երբ այդ երկրներից յուրաքանչյուրում ամրապնդված են տնտեսական եւ քաղաքական համակարգերը իրենց բոլոր ուղղություններով: Եթե երկիրն ուժեղ է իր ներքին կարողություններով, առա նա ինքն է փնտրում այդ հարաբերությունները եւ կապերի զարգացումը: Ցավոք, ԽՍՀՄ փլուզումից հետո այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ մենք զբաղված ենք մեր ներքին տան կառուցմամբ: Եւ մեր հիմնական խնդիրն այն է, որ այսօր գոյություն ունի ինչ-որ կենսաբանական ազգայնամոլություն: Թե ինչպե՞ս պայքար տանենք, դրա դեղատոմսերը ես չունեմ: Փոխարենը յուրաքանչյուրս մեր երկրի ամրապնդմամբ պետք է հասնենք մյուսների հետ կապերի հաստատմանն ու զարգացմանը: Եւ դրանից հետո միայն կլինի նման դաշինք նախեւառաջ Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ»:* Իր հերթին Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանն ավելացրեց, թե Վրաստանը եւ Հայաստանը դարեր շարունակ ունեցել են հոգեւոր դաշինք, որն այսօր շարունակվում է, բայց եւ որոշակի ժամանակ է պետք, որպեսզի այն ստանա նոր բովանդակություն: *«Մենք պետք է բանակցությունների միջոցով գտնենք այդ դաշինքի ամենահարմար ձեւը»,* ասաց նախարարը: Անդրադառնալով բանակցությունների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկմանը, պրն Հովհաննիսյանն ասաց. *«Մենք կողմ ենք, որ Արցախի հարցը գտնի իր արդար լուծումը, որ այն լուծվի ըստ իր արժանիքների եւ միջազգային օրենքներին համապատասխան»:* Նախարարը ողջունեց Վրաստանի մասնակցության դերը Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցում եւ հատկապես էդուարդ Շեւարդնաձեի առաջարկը Անդրկովկասյան տուն ստեղծելու մասին:

Ռաֆֆի Հովհաննիսյանն ասաց նաեւ, որ մինչեւ տարեվերջ Վրաստանում կբացվի Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը:

Ուշ երեկոյան պրն. Չիքվաիձեն մեկնեց Թբիլիսի:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐԱՅՆ

Բարեգործության հրավեր

Սիրելի երեւանցիներ,

Երեւանի քաղաքային խորհուրդը հուլիսի 18-ին, շաբաթ օրը, ժամը 12-ին հրավիրում է ձեզ կամերային երաժշտության տուն մասնակից լինելու իր բնույթով եզակի ցուցահանդես-վաճառքի: Ներկայացված արվեստի բացառիկ ստեղծագործությունները վաճառվելու են աճուրդով: Այս անգամ աճուրդին ներկայացված են հիմնականում սփյուռքահայ նշանավոր արվեստագետներ

ԳԱՌՈՒԻ,
ԺԱՆԵՏԻ,
ՈՒՇԱՐ ԺԵՐԱՆՅԱՆԻ,
ինչպես նաեւ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ,
ՄԱՐՏԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
եւ այլոց ստեղծագործությունները:

Մեր հայրենակից նկարիչներն այս գործերը նվիրաբերել են հայրենիքին մշակութային ձեռնարկումներին աջակցելու եւ օգնելու նպատակով:

Աճուրդից ստացված շահույթը հատկացվելու է երեւանում տեղադրվող երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող եւ Հովհաննես Այվազովսկու հուշարձանների կառուցմանը:

Երեւանի քաղաքային խորհրդի գործկոմի լրատվության կենտրոն

Հայաստանի նախագահը Վանաձորում

«Դում ձեզ ավելի դաշնակցական մի համարեմ, քան ինձ», ասում է Լեւոն Տեր-Պետրոսյանը

➡ Սկիզբը 1-ին էջում

դաշնակցական մի՞ համարեմ, քան ինձ, իմ մայրը եւ հեռիները նույնպես դաշնակցական են, եւ Հայաստանում ՀՅԴ-ն չի կարող ազգօգուտ գործունեությամբ զբաղվել այնքան ժամանակ, քանի դեռ չի ազատվել Աբենքի բյուրոյի լծից»: Իսկ այն հարցին, թե ինչու Կիրովականը Վանաձոր անվանվեց, ԳԽ փոխնախագահ Ա. Սահակյանը պատասխանեց, որ այդ կարծիքին են հանգել նաեւ ԳԽ բնակավայրերի վերանվանման հանձնաժողովի անդամները, որոնց մեջ կան նաեւ գիտնականներ: Իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանն ասաց, թե ինքն էլ է գտնում, որ Վանաձորը քաղաքի անուն չէ, սակայն այլ ելք չկա: Լ. Տեր-Պետրոսյանն ընթերցեց նաեւ քաղաքի «Ազգային դաշինքի» դիմումը, որում պահանջվում էր իր հրաժարականը: Պատասխանը կարճ էր եւ կոնկրետ. *«Ժողովուրդն է ինձ ընտրել եւ ողջ ժողովուրդն էլ թող պահանջի իմ հրաժարականը»:* Նա կտրականապես դեմ արտահայտվեց բոլոր կուսակցությունների լուծարմանը, պնդելով, որ միայն բազմակուսակցությամբ կարելի է ստեղծել ժողովրդավարական պետություն: Վերջում քաղաքի իշխանության ներկայացուցիչները նախագահին նվիրեցին գեղանկարիչ Արամ Նազարյանի «Հույս» կտավը:

Երեկոյան Լ. Տեր-Պետրոսյանն այցելեց Գուգարքի շրջխորհուրդ, այնուհետեւ շրջանի մշակույթի տան դահլիճում հանդիպում ունեցավ բնակչության հետ:

ՍԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

KARAS
ԱՌԵՎՏՐԻ ԱՐԱՍ ՏՈՒՆԸ
առաջարկում է
1. Հեռախոսային եւ ֆաքսիմիլային, համակարգչային կապ բոլոր աշխարհամասերի հետ
2. Աղրանքների եւ անշարժ գույքի առք ու վաճառքի եւ այլ նմանատիպ տեղեկություններ համակարգչային եւ «ՏԵԼԵԿՈՍ» համակարգերի միջոցով
3. Փաստաթղթերի պատճենահանում
4. Համակարգչային ծրագրերի կազմում եւ ձեռք բերում
5. Էլեկտրոնային համակարգերի փորձաքննություն
6. Իրավաբանական, հաշվապահական, տնտեսական կոնսուլտացիա օրենսդրական ակտերի եւ համապատասխան նորմատիվ փաստաթղթերի տրամադրմամբ
7. Գրավաճառ
8. Աստղագուշակություն
PUBLISET
Տեղեկություններ համար զանգահարել հետեւյալ համարներով. ԹԱՔՊ 52-97-40 52-99-83 հուրջարյան

Լուրերի հոսք

Պատրիկեեւի նոր պաշտոնը

Անդրկովկասի զինվորական օկրուգի հրամանատար գեներալ Պատրիկեեւը նշանակվել է Ադրբեջանում, Հայաստանում եւ Վրաստանում օկրուգի զորքերի եւ Կասպյան նավատորմի տեղաբաշխման հարցերով Ռուսաստանյան Դաշնության լիազոր ներկայացուցիչ: ■

Հրվ գումարած Հս Օսիա

«Հարավային եւ Հյուսիսային Օսիաների վերամիավորումը միացյալ օսական հանրապետության մեջ իրական է, եւ մենք կոնկրետ քայլեր ենք անում այդ ուղղությամբ», Սնարի թղթակցին հայտարարեց Հարավային Օսիայի Գերագույն խորհրդի նախագահ Թորեզ Կուլումբեկովը: *«Ամեն ինչ պետք է անել, որպեսզի չկրկնվի 1920 թվականի եղեռնը, երբ 18 հազար օսեր Ֆիզիկապես ոչնչացվեցին եւ 50 հազարը սովվեցին»,* ավելացրեց նա: ■

«Ճակատագրականը»

Ընդառաջելով ՍԱԿ-ի գլխավոր քարտուղարի նախաձեռնությանը, Կիպրոսի հույն եւ թուրք ղեկավարները Նյու Յորքում համատեղ խոսակցություններ ունեցան Բուտրոս Ղալիի ներկայությամբ, կիպրական երկու համայնքների միջեւ 18 տարի շարունակվող վեճը լուծելու, կղզու վերամիավորումը առահովելու նպատակով: Միջազգային մամուլի կողմից «ճակատագրական» որակմանն արժանացած այդ խոսակցություններում հունական կողմը ներկայացնում էր նախագահ Գեորգիոս Վասիլիուն, իսկ թուրքական կողմը կիպրացի թուրքերի ղեկավար Ռաուֆ Դենքթաշը: ■

ԱՄՆ-ը զգուշացնում է

Հինգշաբթի գիշեր Իրաքի իշխանությունները ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդից պահանջեցին չեղյալ համարել 1990 թ. օգոստոսին Քուվեյթի ներխուժումից հետո Բաղդադի դեմ ՍԱԿ-ի ընդունած որոշումները: Պատասխանելով այդ պահանջին, Վաշինգտոնում պետքարտուղարությունը զգուշացրեց Իրաքին, որ միջազգային մասնագետների կողմից քիմիական զենքերի ոչնչացման պահանջի 18-օրյա ձգձգումները պատճառ են դառնում, որ Ծոցի պատերազմի զինադադարի համաձայնությունը վտանգվի: ■

Հոգուտ ռուս եկեղեցու

Երեւանի քաղխորհուրդը 1,5 միլիոն ռուբլի է հատկացրել Երեւանում գործող ռուսական ուղղափառ եկեղեցու հիմնադրամին: Այդ դրամով կկառուցվի զանգակատունը: Հայաստանի մայրաքաղաքի միակ ռուսական եկեղեցու վերականգնմանը օգնելու ցանկություն են հայտնել բազմաթիվ քաղաքացիներ եւ պետական հիմնարկներ: Առաջին նվիրատվությունը կատարել է ծայրագույն պատրիարք Վազգեն Առաջինը 15 հազար ռուբլի, զտի եւ ազգային գորգ: ■

Լուրերը՝ interfax-ի, «Սնարի» եւ մեր թղթակիցների

Ազգ
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ
Խմբագիր ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ
Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ
52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրեն
Apple® Macintosh® համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուության կենտրոնի

Azg Bi-daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Editor H. AVEDIKIAN
ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2
Գրանցման թիւ 65 Դասիչ 69149
Տպաքանակ 20 000 Պատուէր 1514
Ստորագրուած է տպագրութեան 17.07.1992

digitised by A.R.A.R.@